

Բոժանորդադին կԱՆԻՍԻԿ Թուրքիոյ համար տարեկան 50 դրշ, Ռուսիոյ համար 5 ռուբլի. ուրիշ երկիրներու համար 12 ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան Նամակագրոյժ կ'ընդունուի 1 դրշ.նոցը 34 փարսյի հաշուով, կամ 100 դրուշի փոխարէն 115 դրշ: ԾԱՂԻԿԻ Վերաբերեալ ամէն գործի համար դիմել

Ս.ու Տնօրէն-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Պ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ Պոլիս, Պակէ-Գարու, Թաշխան, քիւ 50

40 փարս Ազգային, Քաղաքական եւ Գրական 40 փարս

Ծ Ա Ղ Ի Կ

Լ Ր Ա Պ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاندہ
ه. نومروده « زاغیک » غزته سی مدیری
بالاقاشیان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 11

Շ Ա Բ Ա Թ

28 Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր 1891

Գ Ր Ա Ս Ե Ն Ե Ա Կ

Յ Ա Ն Ձ Ն Ա Կ Ա Տ Ա Ր ՈՒ Թ Ե Ա Ն

ԾԱՂԻԿԻ Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել իւր ընթերցողաց թէ, գոհացումն տալու համար այն խնդրանաց զորս յաճախ կ'ընդունի, հաստատած է Յանձնակատարութեան Գրասենեակ մը:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը հայթայթէ մեծ և փոքր քանակութեամբ ամէն տեսակ ապրանք թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հրապարակներէն գնելի, ինչպէս, գիրք ամէն լեզուաւ, պատկերք, ձայնագրութիւնք, դպրոցական և գրասենեակի պիտոյք, ժամացուցի, տպարանական և այլ արհեստական գործիք, կտակերէնք, ասուեղէնք, ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ կարասիք, և այլն, և այլն:

Վճարմունք կանխիկ են, բայց ի հարկին կարելի է պայմանաժամաւ եւս գործել այն տանց հետ որ կըրնան արտագրիչներն ապահովել, Փոխադրութեան ծախք կը պատկանին յաճախորդաց:

Յանձնակատարութեան Գրասենեակը կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներքին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օտար հրապարակաց վրայ: Առ այդ կը բաւէ զրկել վաճառելի ապրանաց նմոյշները:

Յանձնակատարութեան Գրասենեակը կը փափագի ունենալ թղթակիցներ գաւառական քաղաքներու մէջ:

Թղթակցութիւնք պէտք է ուղղուին առ Յ. Գ. Փալաքաշեան, Կ. Պոլիս, Պակէ գարու, Թաշխան, քիւ 50:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն Ռ ՈՒ Ս Ա Կ Ա Ն Թ Է Յ Ե Ր ՈՒ Ն Ի Գ Օ Լ Ա Ե Ի Բ Օ Լ Ս Մ Ի Ր Ն Օ Յ Ե Ղ Բ Ա Ր Յ

Ղալամ իա, Ռուսական վանքին դիմաց, Այնիգօլա եկեղեցւոյն մօտ, Թիւ 30

Վաճառատուն՝ անցեալ տարւոյ Մայիսի սկիզբները բացուած լինելով, վաճառելի թէյերու տեսակներն եւ գիներն ի ստորեւ նշանակեալ, կը ծանուցանէ ի գիտութիւն յԱրդոյ հասարակութեան:

Թիւ 1. Լիանսին	Ֆունթ 32	Դահեկան
» 2. Չինական վարդ	» 30	»
» 3. Պուքէ էմէրիալ	» 26	»
» 4. Ֆուչէֆու	» 20	»
» 5. Տնական թէյ	» 16	»
» 6. Խնայողական տեսակը	» 12	»

Վերոյիշեալ թէյերը՝ մէկ, կէս և մէկ չորրորդ ֆունթնոց (133 արամ) ծրարներու մէջ ամփոփուած՝ մետաքսեայ եւ կտավարեայ թղթով պատած, իրենց վըրոյ կը կրեն վաճառատան կնիքն եւ ստորագրութիւնն: Սոյն թէյերը չաւրուելու համար մթերանոցին մէջ մասնաւոր տեղ մը գրաւած են, ուր արգելուած է նոյն իսկ ծխելն:

Զ Գ ՈՒ Շ Ա Ն Ա Լ Կ Ե Ղ Շ Ե Ր Է Ն

Անոնք որ կրնան որոշել թէյին լաւն ու վատը, կարող են իրր նմոյշ գնել վաճառատունէս փոքր ինչ և փորձել, վաճառատանս միւս ճիւղն, որ ի Ռուսիա աշխարհածանօթ է արդէն:

Սոյն թէյեր կը վաճառին նաեւ ի Բերա, Թիւնելի դիմաց Ֆրաժէ վաճառատունը, Պոլիս Պակէ գարու Շէյիսիւլիսլամ խան թիւ 2 Միւսիւ Նիքիթիէ էրպէնիկին մթերանոցը, Օրթագիւղ Թաշ նէրտիւպան փողոց թիւ 5 Պ. Գրիգոր Միսիսեանի դեղարանը, Իւսիլուտար Թաշ Տէմիրճիլէր փողոց թիւ 25 Միւսիւ Աքէստօրիսիսին դեղարանը և Գատըգիւղ Նպարավաճառ Բարաթանասիօին մթերանոցը թիւ 19:

(6-18)

Ա Ն Ե Պ Ե Կ Գ Ի Ն Ի Գ Ե Ր Թ Ե Լ Ի

Խ Ա Վ Ե Ա Ր — Խ Ա Ն, Թ Ի Ի 91

Վերջին ժամանակներս գինեչինութեան արգիւնաւորութեան վրայ յաճախ կը գրուին տեղական ազգային և օտարազգի լրագրաց մէջ, և գոհութեամբ կը շեշտուի սոյն ձեռնարկին մասնագէտ համարուող Սուքիասեան Յակօր էֆէնտի անունը, որ իւր երկարամեայ փորձառութեամբն՝ Գարթալի զանազան խաղողներէ՝ ունեցած սեպհական և շրջակայից սյգիներէն անձամբ կը պատրաստէ ընտրեւազոյն և անարատ գինիներ, որոց մէջն յատուկ գնահատութեան արժանի են՝ ԳԱՐՍ.—ՉԱՎՈՒՇ, ՀՕՐԱ, ՀԱՃԻ—ՕՂԼՈՒ, ՔԷՉԻ—ՄԷՄԷՍԻ և ՆՈՒՐ—ՆԻԿԵԱՐ խաղողներէն՝ սեւ գինի, ինչպէս նաև ՄԻՍՔԷԹ—ՉԱՎՈՒՇ, ԳԱՌԱ—ՉԱՎՈՒՇ, ՆՈՒՐՆԻԿԵԱՐ և ԳԱՐՈՒ—ՏԱՂԻ ըսուած խաղողներէն՝ ճերմակ և թէ աւել զգինիներ, որք մայրաքաղաքիս առաջնակարգ բժշկաց կողմէ եւս կը յանձնարարուին ամեն կարգի հիւանդաց: — Կը ծախուին շիշով պատրաստ, նաեւ քաշով և տակառով: Յատկապէս յանձնարարելի են մեծածախ սեղաններու և խրախճանաց հանդէսներու ու շքանշաններու համար:

9-15

FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԲՈՒՍՒՈՐ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱԾԱՆՈՐ ՀԱՄԱՅՆ ԵՒՐՈՊ. ԹՈՒՐԿԻՈՅ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻՈՅ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ

ՖԻՍԹԵԼԼԻ ԿՈՆՏԵՆՊԵՐԿԻ

Այս վաճառատանը կը յանձնարարուի հասարակութեան և ամէն մրցման կրնայ գիտողրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբը: պատրաստութեան տակունութեալը, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կարուածքովը:

ՓԼՈՒՍՈՐ ՄԹԵՐԱՆՈՅՔ Ի Կ. ՊՈԼԻՍ

Թիւնէլի քով Թիւ 2, Եւ Քարաքէոյի Կամուրջին զուլիլ Թիւ 28

ՄԵԾԱՐԱՆԱԿ ԵՒ ՓՈՒՐԱՐԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Դ Ք

Հոտոտ, Քաղալա, Ռուսնուք, Զմիւռնիա, Վառնա, Պուրկաս, Փիլիպէ, Բոր-Սախա, Սերանիկ, Սամսոն, Մերսին, Քիոս, Թարսուս, Ատանա, Պէրութ, Դամասկոս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Աքեա, Ալեքսանտրիա, Գահիրէ, Եայլն, Եայլն:

Մոշարտեան Մկրտիչ և Յովնանիկա

Լոյսարց փաճառատուներ

ԵՐԿԱԹԻ, ԽՈՒՐՏՍԱՎԱԹԻ, ԳՈՐԾԵԱՅ ԵՒ ԱՅԼՈՅ

Կ. Պոլիս, Ալաճա Համամ, Թիւ 44 Եւ Ղալամիա, Բէրշէմպէ բազար,

Մահմուտիյէ—Ճատտէսի, Թիւ 70 Եւ 59.

Անգլիական, գաղղիական և ամերիկեան կարեւոր գործարանայ մէջ պատրաստեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ուստական կախիփաղաղիք (ամա քիլի-տի), հիւսան (տիւլիլէր) գործիներ, եկեղեցական զանգակք, խարտոցք, զինկոյէ ամաններ, գործարանայ վերաբերեալ մեքենայք, երկրագործական բազմազան գործիներ, Եայլն, Եայլն, ամենքն ալ շատ աժան գներով: Ընկերութեանս մեքենագործն գիւրուութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար:

Կ. Պոլսէ և գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք շուտ և կանոնաւոր կը կատարուին: Մեր քով չգտնուածներն ալ յանձնողչէքով եւրոպայէ բերել կուտանք և ուղուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք:

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝

Մ. Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՂՏԱՐԻ

70, Եօրկանճըլար ճատտէսի, Ղալամիա, Կ. Պոլիս

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Կ. ԵԱՎՐՈՒՅԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.

Պանիէ—Գաբու, Ճէլալ պէյ խանի դրան կից, Թիւ 10

Զմեռուան առթիւ սոյն հանրածանօթ վաճառատան մէջ պատրաստ կը գըտնուին Չինիէ և Ճալայէ ուղղակի հասած նոր բերք՝ զանազան տեսակ գերընտիր եւ ազնիւ ու անուշարոյր ամէն ճաշակի յարմար: — Կաղանդի նուէրներու համար՝ թէյով լեցուն ճաքոնական, Չինական եւ Հնդկական այլ եւ այլ մեծութեամբք եւ ձեւերով գեղակերտ և նկարազարդ տուփեր: — Յաճախորդաց գոհացում աալու համար բնաւ ջանք չը խնայուիր: — Յանձնարարութիւնք կը կատարուին փութով և ճշգրութեամբ: — Գիները սրոջ եւ խիստ չափաւոր: — Օր'ք սակարկութիւն:

ԼՆՎԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ

(Ընտանեաց ապագայն)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈՒՍԴԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱԳԼԽՈՅ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ

կառավարութեան

Կեդրոնատեղի՝ 61, Բէֆլուպիք փողոց,

Լիոն (Ֆրանսա)

Ապահովութեալ Կրամբուլ—100.000 000 ֆր

ԼՆՎԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ, որ հաստատուած է նպատեւրու համար փոքր խնայողութեանց, արագ զարգացում մը ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերակազմել դրամագլուխն:

Ընկերութեան գործառնութիւնք բազմազմի են, ինչպէս շարժական արժէից և փոխ տրուած դրամագլխոց ապահովագրութիւն, կորուսեալ դրամագլխոյ մը վերակազմութիւն: Երաշխաւորութիւնք և Գլխավճարք՝ փոխառութեանց և ճարտարուեստից և վաճառականութեան մէջ գործածուած դրամագլխոց, մանկանց համար օժիտք, հանգստեան սնտուկ ծերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն: Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 15ն:

Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար դիմել առ Բարսեղ Էֆէնտի Թէլլալեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Պահճէ—Գաբու, Շէյխ—Իսլամ խան, Թիւ 11:

ՉԷՆՈՒ ՄԵՐՃԱՆՃԵԱՆ

Պանիէ—գաբու, Համիտիէ ցատտէս, 58

Իքի գաբուլը դեղարանին դիմաց

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՑԻ

Պատի, Գրպանի

Ոսլիէ, Արծաթէ եւ Նիքէլէ

ԳՈՂԱՐԵՂԵՆՔ

Ապարանջաններ, Պառչներ, Օղեր, Մատանիներ, Մեծայեծոններ, Եայլն:

Այս բոլոր ապրանքները բերուած են Եւրոպիոյ լուազոյն գործարաններէն, և իրենց ճաշակն, քրօթը և ընտրութիւնը կ'արդարացնեն այն համեմատարար համեստ գինն սրով ի վաճառ հանուած են:

Փոքրաքանակ և մեծաքանակ վաճառումն

Վաճառատուներ յանձն կ'առնու ամէն տեսակ նորոգումներ, ժամացոյցի և գոհարինաց յանձնարարութիւններ: Կրտի Գեղեցիկը կը ներդրուին: 3—5

Բաժանորդագրին կԱՆՆՍԻԿ Թուրքիոյ Համար տարեկան 50 դրշ, Ռուսիոյ Համար 5 ռուբլի, ուրիշ երկիրներու Համար 12 Ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան Նամակագրոջմ կ'ընդունուի 1 զրշնոցը 34 փարայի հաշուով, կամ 100 զրուշի փոխարէն 145 զրշ: ԾԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար դիմել:

Առ ՏՏօրէն-Հրատարակիչ ՅՈՒՆՍԵՆ Դ. ՓՅԼԱՊՍՇԵՍԵՆ Պոլիս, Պահչէ-Դարու, Թաշխան, քիւ 50

ՇԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

درعليهده بفتح قوسنده طاش خاندہ
۵۰ نومروده «زاغیک» غزتمسی مدیری
بالا قاشیان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 11

Շ Ա Ր Ա Պ

28 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1891

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

Գ Ր Ա Պ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն (1)

«Ամուսնական Խնդիրներ» Արխսակէս Եպիսկոպոսի Սեդրակեան, Մոսկուա 1891,

Ի Թիբեկ Միսաք Արամեանէ

Դ.

Մեր տեսութիւնը «Ամուսնական Խնդիրներ» ներածութեան», որպէս Սեդրակեան Սրբազանի վիլիստիայական դաւանելեաց հանգանակի մասին՝ հարկադրուած ենք ընդհատել այն հարեանցի դիտողութիւններով զոր մենք պարփակեցինք մեր «Նշմարներ»-ու վերջին հատուածի մէջ: Տարբարազար լրագրական յոգուածի անձուկ սահմանը չներեր որ կարեւորութեան չափով պարագայական քննութեան աննէինք Սեդրակեան Սրբազանի կանոնադրական վարդապետութեան ամբողջ դրութիւնը, որովհետեւ միմիայն այս կերպով կարելի էր հանգամանորէն պարզել այս վարդապետութեան կատարեալ անհեթեթութիւնը: Բայց ինչ ալ որ է՝ այսու ամենայնիւ կը համարձակինք մտածել որ մեր դիտողութիւններով յոյս տուինք թէ ո՛ր աստիճան անհիմն է Սեդրակեան Սրբազանի աշխարհայեցողութիւնը, ո՛ր աստիճան տկար և աղքատ են այն տարերքները որոց վրայ հաստատուել է նա իւր կըշուադատութիւնները, և վերջապէս ո՛ր աստիճան հակառակ են նորա մտաբերութիւնները եկեղեցւոյ թէ՛ դրական վարդապետութեան, թէ՛ հոգուն եւ թէ՛ պատմական վկայութեան:

Սակայն մեր դիտողութիւններն անկատար կը մնային, եթէ չը կամենայինք պարզել թէ ի՞նչ ըսել կ'ուզէ Սեդրակեան Սրբազանը՝ յայտնելով որ անփոփոխ են եկեղեցւոյ դաւանաբանական

սկզբունքները, ծէսերը և սլաշամունքները. ինքն ըստ ինքեան այս միտքը այնքան խաւար է և անկերպարանք և այնքան ատարակուսելի, որ որպէս աստուածաբանական մտածողութեան բանաձև՝ ամենաներողամիտ քննադատութեան ալ ստոր է: Թողնենք այն կէտերը եկեղեցագիտական ուսման մէջ՝ ինչպէս են եկեղեցւոյ նուիրապետական գրութիւնը և սրբազան աւանդութիւնները զորս նոյնպէս անփոփոխ կը դաւանի եկեղեցին, հարցնենք, թէ ո՞ր կարգի մէջ պիտի դրուին քրիստոնէական բարոյականի այն թելադրութիւնները որոց լրութիւնը կը կոչենք «Օրէնք Տեառն»:

Ճշմարիտ է, այս հարցին ուղղակի գրականօրէն պատասխան տալու համար հարկաւոր է քիչ թէ շատ հիմնաւոր հիմնութիւն ունենալ եկեղեցւոյ դաւանաբանական ու բարոյագիտական ուսման գոնէ էական և ընդհանուր գիտելեաց վրայ, որպէս զի դիւրաւ ըմբռնելի լինի, թէ եկեղեցին ինչ առնչութիւն է դրած հաւատի դաւանելեաց և բարոյական սկզբանց լրութեան մէջ: Սակայն առանց այսպիսի աստուածաբանական նրբութեանց ալ տեղեակ լինելու՝ ամէն մի սլաշամիտ քրիստոնէայ լսած է թէ, «ոչ ամենայն որ ասէցիս Տէ՛ր, Տէ՛ր՝ մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնիցէ զկամս Հօր իմոյ» (Մատ. է. 21), և թէ՛ Յայսմիկ գիտեմք, եթէ ծանեաք զնա, եթէ զպատուիրանս նորա սլաշիցեմք: Որ ասիցէ եթէ ծանեայ զնա, և զպատուիրանս ոչ սլաշիցէ, սուտ է և ճշմարտութիւն ոչ զոյ ի նմա» (1 Յով. բ. 3-4): Արդ եթէ այդ Ս. Կամքը այդպիսի առնչութիւն հաստատած է քրիստոնէի դաւանութեան հետ և իւր կենարար թելադրութիւնները մարմնացուցել է այն օրինաց մէջ զորս եկեղեցին Ս. Գրքէն ստանելով և ժողովական կանոնաց միջնորդութեան սահմանադրելով կը սլաշտէ երկիւղածութեամբ, որպէս բարե-

պաշտութեան անմեկին և անհրաժեշտ զործողութիւն, և վերջապէս եթէ ըստ առաքելոյն՝ քրիստոնէական եկեղեցւոյ հաւատը պիտի յաջողուի ո՛չ թրիատութեամբ կամ անթրիատութեամբ, այլ սիրով և աստուածային օրինաց պահպանութեամբ. (Գաղ. ե. 6. 1, Կորնթ. է. 19)՝ միթէ այս պարզ վկայութիւններէն յետոյ կարելի է՞ խօսք բանալ այդ օրինաց բնութեան ու յատկութեանց մասին: Անուանել հին, փառած, անտանելի, և այլն, այն օրէնքները զորս եկեղեցին պաշտել է ու կը պաշտէ որպէս պարտիք քրիստոնէական արդար և ճշմարիտ բարեպաշտութեան, կը նշանակէ ընդունիլ թէ՛ Աստուածութիւնը ստած է՝ իւր լուծը քաղցր և բեռը փոքրողի անուանելով, իւր մարդասէր կամքը յայտնել է այնպիսի ծանր օրէնքներով, որ մարդու համար հնանալով կը դաւանան անտանելի և յետ կը մնան ընկերական պահանջներու զարգացումէն: Որովհետեւ ո՛չ աստղ բանականութիւնը և ո՛չ ալ խիղճը կարող է տանիլ այդ մտածողութիւնը, որպէս անքաւելի հայեցողութիւն Ս. Հոգւոյն դէմ, ուստի կը մնայ մտածել որ արդարեւ այդ օրէնքները անտանելի կը դաւանան, երբ Տիրոջ կամքի անը վճուել ենք պաշտել մեր մարմնի ցանկութիւնները: Չափազանց վեր ի վերոյ հիմնութիւն ունեցած պիտի լինիմք եկեղեցական պատմութեան վրայ, և մեր ունեցած հիմնութիւնն ալ մեր կանխակալ, քմահաճ հայեացքներու համեմատ մեկնութիւններով թիւրած ու թեքած, որպէս զի մոռնանք թէ եկեղեցին իւր զինուորութեան ասպարիզի մէջ ինչպէս որ մաքառել է իւր դաւանաբանական մուրրութեանց դէմ, բացառապաշտելով և ճշդութեամբ բանաձևելով իւր դաւանաբանական ճշմարտութիւնները, այնպէս ալ մաքառել է նա իւր բարոյական օրինաց ցանգը ապականող և ասպականելու ճգտող մուրրութեանց ու մուրրութեանց դէմ՝ կանոնական սահ-

(1) Շար. «Ծաղիկ»ի նախորդ թիւէն:

մանները վերանորոգելով և վերահաստատելով:

Այս ամենէն յետոյ բոլորովին անհասկանալի կը դառնայ այն հանգամանքը որ առիթ է տուել «Ամուսնական խնդիրներ»ու հրատարակութեան:

Գերհեղինակի ասելով, նա այս աշխատութիւնը որոշել է հրատարակել կարգալով որ Կ. Պոլսոյ Հայ եկեղեցականաց Համագումար ժողովը մտադիր է առաջարկել Կաթողիկոսին, որ մի ընդհանուր եկեղեցական ժողով գումարէ, որպէս զի եկեղեցւոյ ամուսնութեան օրէնքները բարեփոխուին: «Այդ օրէնքները այլ ևս չեն համապատասխաներ ժամանակի պահանջից. հին, փտած, խել մը օրէնքներ այլ ևս անտանելի են: Մեր եկեղեցականութիւնը փորձով վայն կը տեսնէ ամէն օր և իմաստութիւն կ'ունենայ չարիքին դարման փնտռելու»:

Շատ օտարոտի երևոյթ. Սեդրակեան Սրբազանը մի առանձին ընդունակութիւն ունի հմտութեան աղբիւր գտնելու: Եկեղեցու սահմանադրական իշխանութեան վրայ խորհելու ժամանակ, իրեն համար առաջնորդ կ'ընտրէ Դրեպերը, Տայլորին ալ վրան. իսկ ազգային եկեղեցական ընթացիկ գործոց համար անդեկատու կ'ընտրէ Հայկալը:

In dubiis libertas, — Ի կասկածաւորս ազատութիւն. բայց այս նենգամիտ լուրի միջնորդութեամբ լարուած դաւի առաջ միթէ այլ ևս կարելի է՞ առարկութիւն անել կասկածաւորի մասին: Եթէ Սեդրակեան Սրբազանի անվիանդ վստահութիւնը՝ փրկութեամբ կան կասկածաւոր վարդապետութեան վրայ, կարելի է բացատրել այն հանգամանքով որ նա՝ օտար գրականութեան միմիայն տարերքն առած՝ կարծել է թէ այդ գրականութեան համբարած պաշարը կը կազմեն դիպուածով իւր ձեռքն ընկած Դրեպերը, Տայլորն և ասոնց նման միտումաւոր հեղինակներն, և յափշտակուել է անոնց գաղափարներով, — ընդհակառակը մեզ համար ամենեւին անբացատրելի է, որ Սեդրակեան Սրբազանի նման մի բարձրաստիճան եկեղեցական, առանց դիտողութեան այնքան կշիռ ու կարևորութիւն կուտայ Հայկալի նման մի կասկածաւոր անձի յայտնապէս նենգաւորութեամբ հաղորդած նենգամիտ լուրին: Եթէ Սեդրակեան Սրբազանը այնքան միամիտ է որ չէ իմացած թէ ինչ շարածձի է այդ թղթակիցը, ինչպէս վարպետ է գրական բազեր թուցնելու մէջ, — և վերջապէս եթէ անտեղեակ է մնացել թէ ինչպէս այդ մարդը բանասիրութիւնը իրեն արհեստ շինած, սուտ-գրոց լուրերով Կ. Պոլսոյ

սից թիֆլիս և թիֆլիսից Կ. Պոլիս հասարակաց միաքը միշտ պաշարել է շփոթութեամբ և մուրրութեամբ, գոնէ այս լուրի մէջ եկեղեցւոյ օրինաց մասին այդ մարդու բանեցուցած անպատկառ ոճը բաւական էր խելամոռացնելու թէ ինչ հոգու տէր է:

Իւր ժամանակին մենք ալ այս լուրը կարդացինք և զգացինք թէ որքան միամիտ մտքեր պիտի հաւատան ստուգութեանը: Ինչպէս արդէն դիտել ենք, մեզ համար նորութիւն չէր տեսնել որ մեր տկարամիտ առաջադիմականութեան փողահարը օգտուել է դէպքն եկեղեցւոյ օրէնքները նշաւակելու. մեզ համար նորութիւն էր այն յանդգնութիւնը, որով նա եկեղեցւոյ օրինաց վերայ այդպիսի ցանցաւ դիտողութիւններ տալով, միևնոյն ժամանակ և կը հաւատարմացնէ միամիտ ընթերցողները, իբր թէ նորա դատողութեան ձայնակից է Հայ եկեղեցականութիւնը, և իբր թէ սա ալ նշմարել է այդ օրինաց բարեփոխութեան կարևորութիւնը ժամանակի պահանջներու համեմատ, և թէ այդ բարեփոխութիւնը պիտի կատարուի Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնութեամբ: Սա արդէն զբառնութեան կատարն էր:

Եթէ մի յետ ընկած գիւղի երէց, ոմն Տէր-Յովսէփ Մեղեանց, այնքան պայծառ գիտակցութիւն է ունեցեր եկեղեցւոյ ամուսնական խորհրդի ուսման վրայ, որ քաջութեամբ կարողացեր է ջատագովել այդ դրութիւնը ընդդէմ մուլար քարոզներու և գայթակղիչ օրինակներու, ցոյց տալով հանդերձ այդ դրութեան խանգարման վտանգը հետեւանքները, («Ապօրինի կնապահութիւն»: «Նոր-Պար», 1884, թիւ 107), միթէ կարելի է տարակուսիլ որ այդ գիտակցութիւնը աւելի պայծառ չէ Կ. Պոլսոյ եկեղեցականութեան մէջ:

Եւ արդարև մենք երկնքի ու երկրի դէմ աններելի յանցանք կը համարէինք եթէ մի վայրկեան անգամ ներկինք մեզ մտածել թէ, արդարև Հայ եկեղեցականութիւնը իւր լրութեան մէջ կարող է մեր առաջադիմականաց նման դատել եկեղեցւոյ ամուսնական օրինաց մասին, իբր թէ դոքա հին, փրտած, խել մը աւելորդ ծանրութիւններ են, այլ ևս անտանելի և անհամապատասխան ընկերական կեանքի արդի պահանջից, և թէ իմաստութիւն է աննց բարեփոխութեան կարևորութիւնը նշմարելը: Որովհետև ընդունելով այդ միտքը, անհրաժեշտօրէն պիտի ընդունինք նաև նորա հետեւանքը թէ Հայ եկեղեցականութիւնը իւր լրութեան մէջ այնքան տգէտ է և ան-

փոյթ, որ ի հաճոյս քմահաճ ենթադրութեանց՝ առ ոչինչ կը համարի հրապարակօրէն ժխտել կրօնի այն հիմնական սահմանները որոց անյեղլի, անփոփոխ և աշխուրջ պահպանութեան համար ուխտած է առաջի Աստուծոյ և մարդկան: Այս փաստի առաջ՝ մեր ամենախորին համոզմամբ՝ մի այդպիսի աշխուրջ և գահազմէթ խորհուրդ ու մտածողութիւն վերագրել Հայ եկեղեցականութեան, կը նշանակէ չարաչար զրպարտել զայն: Մեր եկեղեցականութիւնը, այն ալ թիւրքահայոց եկեղեցականութիւնը, չնայելով մասնաւոր հետաուսներու, իւր լրութեան մէջ այնքան աշակերտած է Ս. Գրոց ուսման և այնքան զգոյշ է իմաստասիրութեան մէջ տկար և աղքատ տարրերուն տպաւինելէ, որ կարող չէ չգիտնալ թէ, եկեղեցւոյ ամուսնական օրէնքները, որպէս Աստուածային յայտնութեան բացարձակ պատգամներ, կենսագործելով իրենց մէջ քրիստոնէական բարոյականի գերագոյն սկզբունքները, ժամանակի փոփոխութիւններէն չեն կարող եղծուիլ ու հնանալ իրենց էական յատկութեանց մէջ: Այդ փոփոխութիւններն արտաքին աշխարհի մէջ որքան ալ զգալի ու արմատական լինին, կարող չեն բեկել այդ օրինաց պարտաւորիչ զօրութիւնը այնպէս որ դրանք եկեղեցւոյ համար դառնային «հին, փրտած, խել մը անտանելի ծանրութիւն»:

(Շարունակելի)

Մ Տ Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

— Պարզութիւնը գեղեցկութեան մայրն է, ընտելութիւնը՝ նորա դայեակը, իսկ Սեթեւեկն՝ նորա մօրուն: Գծաբար գեղեցիկներէն բազումք իրենց խորթ մայրը կը ճանչնան:

— Եթէ ձեզ հարցուի թէ ի՞նչ կայ թանկագիններէն աւելի թանկագին, պատասխանեցէք՝ «Ժամանակ և Առողջութիւն»:

— Երջանկութիւնը թուշոյ վանդակի մէջ պահուած փոքրիկ թիթեռնիկի մը կը նմանի. երկուք մը թռչտելուն պէս դիւրաւ խոյս կուտայ անկից:

— Վեհօգի կ'ըսուի այն անձն որ տուածը՝ ոտքին, իսկ ընդունածը՝ սրբտին վրայ կը պահէ:

— Ամենէն՝ յուսահատ վայրկեանի մէջ իսկ կը բուէ անցեալ յիշատակ մը միտք բերել՝ փարատելու համար վհատութեան և տխրութեան մռայլ ամպն

— Այնքան մեծ դեր կը խաղայ յիշատակը՝ կեանքի մէջ:

Խորհեցաւ ՄՏԱՍՏԻԿ

ԲՈՐՈՑՈՎՈՒՄ ԳԵՐԸ ԳԵՂԱՐՈՒՅՈՒՄ ՄԵՋ

Les règles de la morale sont aussi les règles de l'art. SCHUMANN

Արուեստն արուեստին համար. — Կ'ըսէ վարդապետութիւն մը. այսինքն թէ նոքա որք ունին իւրեանց ձեռաց մէջ մի գրիչ կամ մի վրձին, մի քնար կամ մի գրոց, պէտք չեն նկատել բարոյականի կանոններ՝ մինչ մի՛ արձան կը կերտեն հոյակապ, երբ մի նուագ կը շարագրեն հոգեթրթիւ, կամ մի պատկեր ճշգրտատիպ. թէ գեղարուեստի զաւակը պարտի ազատ լինել ամէն շըլթայներէ, թէ նա առանց ունին գրելու բարոյականի ձայնին՝ պարտի մարմին տալ իւր երևակայութեան յղացմանց որք և կրեն ճշմարտութեան ու բնականութեան դրոշմն. թէ կեանքն զոր կը գծէ, նկարը զոր կը յօրինէ, պարսին ցոլացնել յինքեանս ընկերութիւնն իւր ու է ձեռն տակ, ինչ փոյթ թէ այդ երկ գեղարուեստի՝ տգեղը կը նկարէ առաւել քան գեղեցիկն, յուրն քան թէ լաւն, դժուրն, ստորինն քան վեհն ու վսեմ, ինչ փոյթ թէ այդ երկի մէջ մարդկութեան յուր կողմերն են և եթ նկարեալ, թէ անդ նախանձը կը սուլէ, ատելութիւնը կը շէջ, վրէժ-խնդրութիւնը կը մեռնէ, սճիրը կը ներբողուի, կոշտ բնագոյնը, դժուր ըզգացմունք անսանձ կը խիզախեն. ինչ փոյթ եթէ ընթերցողն ու դիտողը կը շինին ամսթլեած, կամ մի ախար ու ահաւոր տպաւորութեամբ կը համակին: Ո՛չ, ո՛չ, կ'ըսէ այդ վարդապետութեան աշակերտն, արուեստագիտին կոչումն այլ է, բարոյախօսինն ա՛յլ, և թէ բարոյականի կանոնք պարտին լռել նորա առջև և ոչ թէ խոչընդոտ կանգնիլ, զող տալ նորա մատանց, կապտել նորա հանձարն և արգելուլ իւր երևակայութեան առնուլ զիւր թուիչ խանդավառ:

Եւ տակաւ կը ծաւալի այս չարագուշակ վարդապետութիւն, բիւրաւոր մատեանք կ'ողղեն ընթերցանութեան դաշտն. մտաւորական բարձրաստի պարտիզպանք չեն փութար հակակշռել այդ հոսանքն աւերիչ. դարչելի վէպեր, բնապաշտ դպրոցին արդիւնք, կը նըկարեն ընկերային աշխարհի յոռեգոյն, վաթարագոյն երեսն. մարդոյն անասնական ստորնագոյն կիրք, տղմի մէջ թաւալող հոգիք, բարձրանալու անկարող էակք, ի մի բան, մարդ-անասունք կ'ունենան իւրեանց ճարտար կենսագիրներ. ամենուրեք կը ծաւալին այդ լրբենի գրուածք որոց բուրումն ժահահոտ տակաւ կ'ապականէ ընկե-

րական աշխարհի մթնալորտն. վայրահաչ Զօլաներ դիւային ժպտով կը կրկտեն ամէն տգեղութիւն. վսեմ պատկերներու փոխան կը տարածուին աղտեղի նկարներ յորս սրբուած ջնջուած են մարդոյն գերբնտիր յատկութիւնք, ազնիւ զգացմունք:

Պէլլիններու ճորմաներն մեղամաղձոտ, Վէպերի նուագներն հոգեյոյզ ու երազուհ, սօնաքն գիւթիչ ու սիրալի, Մոցարդի վսեմ Սէմօնիք, Լընիէրի քնարն երկնաթրթիւ, Շօբէնի միմունջքըն սրաալիւր, նուագք հոգեզուարճք որք կը թուին եթերատենչ լանջերէ, նուազ հրապուրալի կը թուին այժմ քան երաժշտութիւնն մեղի, վէպքն հանգուռնատիպ. . . .

Եւ ընթերցողն ու ընկերութիւնը բնատիպ նկարելու պատրուակաւ արուեստագէտք այսպէս կ'արտադրեն երկեր որոց մահաբոյր, սառնազին շընչոյն ներքև երկիւղալի է զի կասի ընկերային բարեշրջութիւնն ու մթագնի քաղաքակրթութեան արիւն լուսափողիւ. . . .

Բայց հարցունեմք նոցա որք կը մերժեն բարոյականի կանոններն արուեստից մէջ. — Արուեստը կարէ՞ անբարոյական լինել. անբարոյական արտադրութիւն մը կարէ՞մք գեղարուեստից մէջ դասել. ո՞չ ապաքէն գեղարուեստի սահմանն իսկ կը մերժէ անբարոյականութիւնն: Արուեստագէտն ինչ ընտիր ու չընաղ ճրիւք ալ լինի օժտեալ, չկարէ մի վեհ գործոյ ծնունդ տալ, յորժամ բարոյականի, բարւոյն շունչն կը պակսի յինքեան, այդ բարերար ու կենդանարար շունչն. Գեղարուեստից մէջ հոգին չէ՞ որ մի արուեստագիտի երկին վրայ կը դրոշմէ մեծութեան ու վեհութեան կնիքն. ստորին հոգի մը կարէ՞ աւանդել իւր գործոյն այն շունչն որ մի ցուրտ ու անշունչ մարմարիտնի առջև համայնք իմն ի ծունր կ'իջեցնէ զամենքն և որ մերթ մատենի մը մէջ սքօղեալ ՚իացման արտասուք կը լսէ ընթերցողէն. և ո՞չ ապաքէն առաքինութիւնն, բարւոյն սէրն հոգւոյն զօրութիւնն են: Գեղարուեստք պարտին գեղեցիկութիւն ունենալ յինքեանս. բայց երբ արուեստագէտք ու մանք միայն ճշմարտին են ի խոյզ, միշտ գեղեցիկը նկարած կը լինի՞ն. արդարև ճշմարտը մեծ կապակցութիւն ունի գեղեցիկին հետ. rien n'est beau que le vrai. բայց ամէն ճշմարտագեղեցիկ չէ. գեղեցիկ է և եթ այն որ մեր հիացման, խանդին ու սիրոյն կը լինի աւարկայն, որ կը յուզէ մեր սիրտն, կը խօսի մեր երևակայութեան և կը դիւթէ մեր էութիւնն համայն. ուստի և ամէն ճըլմարտ գեղեցիկ չլինելով, այն արուես-

տագէտք՝ որ միայն ճշմարտութիւնը կը նկարեն, իւրեանց արուեստին դէմ իսկ կը մեղանչեն:

Ճշմարտ արուեստագէտը պէտք է այնքան փնտռէ ճշմարտութիւնն որքան և գեղեցիկն. իսկ բարին գեղեցիկն աղբիւրը չէ՞. գեղեցիկն սիրահար ոք անկարելի է որ չսիրէ առաքինութիւնն, անկարելի է որ լինի անբարոյական: Գեղարուեստք գեղեցիկն բացատրութիւնն են. գեղեցիկն է որ կը մարմնաւորի արուեստագիտին գրոցին կամ վրձինին տակ. հետևապէս արուեստը չկարէ լինիլ անբարոյական, ըստ որում բարին մին է գեղեցիկին պայմաններէն:

Նոքա որք կը մերժեն բարոյականին մտից իրաւունք տալ արուեստից մեջ, լիովին հակասութեան մէջ կ'ընկնին. քանզի երբ նոյն իսկ տգեղութիւնը միայն կը նկարեն, դարձեալ խրատական նպատակ մ'ունի, միայն թէ անբարոյական է այն խրատն զոր կուտան անուղղակի. երբ անբարոյականութիւնն իսկ քարոզեն, դարձեալ բարոյախօսի դեր մը կը կատարեն, միայն թէ թուանաւորիչ է իւրեանց վարդապետութիւնը: Բարոյականն ու արուեստն ոչ միայն հաշտ են միմեանց հետ, այլ և անբաժան. արդ, է՞ր ուղղիչ՞ ու շինիչ չլինի այն բարոյականութեան վարդապետութիւնն զոր անուղղակի կը քարոզեն արուեստագէտք:

Անբարոյական արուեստագէտն թուանաւորիչ տարրն է մարդկութեան. ընկերութիւնն իրաւունք ունի վրէժխնդիր կանգնելու, հալածելու այդ էակներ որոց կեանքն հանրութեան մահն է, որոց ներկայութիւնն թուանաւորիչ է հանրային բարուց համար. ընկերութեան մթնոլորտն ապականող ճճին է անբարոյական արուեստագէտն կամ հեղինակն:

Իրաւամբ կ'ըսէ Լոպպիւշչու. «Երբ ընթերցում մի կը բարձրացնէ ձեր միտքըն և կը ներշնչէ ձեզ ազնիւ և արիզգացումներ, մի՛ որոնէք այլ պայման դատելու համար երկն. լաւ է և վարպետի ձեռաց արդիւնք»: Տ. տը Սթալսա դադափարը կը յայտնէ թէ ո՛ր է արուեստագէտ՝ արուեստագէտ լինելէ առաջ՝ մարդ է. ուստի և նախ պարտի լինել բարի, ազնիւ ու բարոյականի տէր մարդ: «Եթէ — կ'ըսէ նա — համարձակի ոք խրատ տալ այն հանձարոյն՝ որոյ միակ առաջնորդ կ'ուզէ լինել բնութիւն, զուտ զրական խրատներ պէտք չէ ուղել նմա, այլ պէտք է բանաստեղծից խօսիլ որպէս առ քաղաքացիս, որպէս առ դիւցաղունս. պէտք է ըսել նոցա. եղէք առաքինի, եղէք հաւատացեալ, յարգեցէք զոր ինչ կը սիրէք, փնտռեցէք՝ զանմահութիւնն ի սիրոյ և

զԱստուած ի բնութեան . վերջապէս սրբագործեցէք ձեր հոգին զերդ մի տաճար, և հրեշտակն ազնուական դադարաց չպիտի արհամարհէ երևիլ անդրը : »

Բայց առարկեն մեզ գուցէ . երբ ընկերութիւնն ունի այնքան վերքեր, երբ այնքան ախտեր կը ճարակին յայնմ, երբ այնքան ազեղութիւն կայ իւր խաւերուն մէջ, այնքան քստմնելի ոճիրք, այնքան սեւ ճակատներ, արիւնաթաթաւ ձեռներ, երբ նորա ծոցոյն մէջ կը խայտան այնքան թունալից իժեր, երբ կը շէնն այնքան թարթիփներ ու թորքուէմատներ, արուեստագէտն իրաւունք չունի՞ նկարել զայնս իւրեանց խակտիւղ գոյներով, միթէ իրաւունք չունի՞ ի լոյս անել խաւարի մէջ ծիւցող քօղածածուկ ձիւղներն, և եթէ չը գործէ այսպէս, չմեղանչէ՞ր արուեստին դէմ, չմեղանչէ՞ր ճշմարտութեան դէմ : Արդարացի են այս առարկութիւնք . բայց հա՞րկ է ներկայացնել զայնս այն հրասուրբիչ երանդներով որք փոխան զայրոյթ դարթուցանելու ընթերցողին հոգւոյն մէջ, առաւել հետաքրքրութիւն կը ծնուցանեն ի նմա . հա՞րկ է զի հեղինակը նկարէ զայնս այն արդարացուցիչ ոգւով զոր ունին վիպասանք ոմանք — իրապաշտ, մանաւանդ բնապաշտ դարձողն աշակերտք . այդ մահարոյր մատենից մէջ հեղինակին դատակնիքը կայ գրուած . անձնիւր երկ յորում հրասուրբ զգեցած է ազեղութիւն, անբարոյականութեան սև կնիքը կը դըրոյմէ հեղինակին ճակտին վրայ :

Կը տենչայ հեղինակն նկարել բնատիւղ շնչաւոր ու անշունչ ընկերութիւնն, թո՛ղ իւր բանից մէջ գնէ իւր համայն ցասումն ու զայրոյթն արդար . թո՛ղ իւր գրիչն՝ խարազան մի լինի մուրութեանց ու մուրութեանց համար, իւր խօսքն չանթ մի ազիտութեան, ազեղութեան ու ապականութեանց դէմ, թող իւր երկին մէջ տեսնուի իւր գթոյ ու ցաւոյ արտասուքն, իւր սիրտն արիւնալից ու հոգին կարեւեր . արուեստագէտն թո՛ղ կերտէ այնպէս որ մի անշունչ ու անտաշ քար, մի մատեան — թղթերու ծրար — ազնիւ ու վեհ ըզգացմամբ ընուն ընթերցողն ու զիտող իւր արիւնտ սրտին հետ, ընթերցողին սիրտն ալ պիտի արիւնի, իւր ցասումն նորա հոգւոյն մէջ ալ պիտի արծարծէ զայրութի հուրն :

Արուեստագիտին գործն որքան առաւել կը գեղեցկանայ, երբ ընկերութեան ազնիւ և լուս կողմերն եւս կը նկարէ . ո՞չ ապաքէն բարին ընդհանուր հրասուրբ մ'ունի, և որպէս ըսի, գեղեցկին մի աղբիւրը չէ՞ . բարոյական գեղեցկութիւն մի կրնայ ներշնչիչ ազ-

բիւր մի լինել արուեստագիտին համար, թեւ տալ իւր երեսակայութեան և յոյզ իւր հոգւոյն :

Հեղինակին գործն առաւել կը շահի երբ բնատիւղ դիմաց հանդէպ կը շղարհենէ իտէպն ու տիպար հոգիներ, որք կը բարձրացնեն մարդկային հոգին և մի մի լուսեղէն սրտներ կը լինին կենաց շաղկին վերայ :

Բարոյական գեղեցկութիւնք յոյժ լաւ նիւթ կարեն լինել նկարչին վրձինին ու բանաստեղծին քնարին ու երգին : Է՞ր Սոփոկլէսի և Շիլլէրի բարոյական գործք կը մնան յաւէտ գեղեցիկ . է՞ր Կլյեօմ թէլ ունի ցարդ այնքան հըրապոյր և կը ներշնչէ ու կը յուզէ այնքան քնարներ . ժամանակին աւերիչ շունչն պատկանանք կը կասի այդ երփնազեղ ծաղկանց աւջեւ :

Վիքթօր Հիւկոյի այդ հսկայ հանձարին հսկայ արտագրութիւն պաշտելի մատեանը կը մնայ ամենայն ազգաց, սրբազան աւետարանն տասն և իննէրորդ դարու, անմահ յիշատակարան սիրոյ ու հանձարի — որպէս կ'ըսէ Հայթարգմանիչն — յորում բարձր հոգւոյ մի շունչն կ'զգայ ընթերցողն, և կը վայելէ նորա հետ կենակցելու անձու հեշտութիւնը : Ա՛հ . Տեսակա՛նը պէտք է գեղարուեստին համար . Միթիւ հիանալի դէմք մ'է . Փանթի՛ն պաշտելի մայր մը . . . :

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՇԱԽԼԵԱՆ

ՀՈՒՂԱ ԿԱՄ ԷՍԿՆ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ

Յիմարարութից ամենէ երեւելին և ամենէ, հաշակաւորն, արթթէօն Մառաւանտ խնդրած էր իւր երեք պաշտօնակիցներէն և բնական գիտութեամբ զբաղող չորս գիտուններէ, ժամու մը չափ գալ համախմբուիլ իւր բնակավայրըն, իւր տնօրինութեան ներքև դրոնուած հիւանդանոցին մէջ, որպէս զի ցոյց տայ անոնց իւր հիւանդներէն մին :

Հազիւ թէ իւր բարեկամներն հաւաքուած էին, արթթէօն Մառաւանտ խօսք առաւ . «Չեզ պիտի յանձնեմ ի քննութիւն, տեսարք, ըսաւ, բոլորովին անսովոր և տաղնապալից հիւանդութիւն մը որոյ նմանը ցարդ սչ ոք տեսած ու լսած է : Հիւանդիս նկատմամբ ըսելիք մը չ'ունիմ . ինքն է որ պիտի խօսի » Իժիչը զանդակն հնչեցնելով, ծառայ մը խիղցն սենեակ մոցուց յոյժ նիհար անձ մը, մեռելային նիհարութեամբ, որպէս են կարգ մը նիհար յիմարներ զորս կը մաշցնէ միակ մըտածողութիւն մը, քանզի ախտացեալ մտածողութիւնը աւելի կը հիւծէ մարմինը քան տենդն ու թոքախտը :

Սենեկին մէջ գտնուողները բարեկէ և արթուն մը վրայ նստելէ վերջ, հիւանդն սա պէս սկսաւ խօսիլ . «Տեսարք, գիտեմ թէ ի՞նչ պատճառաւ համախմբուած էք աստ . պատրաստ եմ ձեզ ըսելու իմ պատմութիւնս, ինչպէս խնդրած է ինձմէ ազնիւ բարեկամս, արթթէօն Մառաւանտ : Նա երկար ժամանակ զիս յիմար կարծած է : Այժմ կը տարակուսի : Շուտով ամենքդ պիտի համոզուիք թէ ձեզի չափ ողջամիտ եմ, ձեզի չափ զգաստ և կորովամիտ, և այս ալ դժբաղդարար ինձ համար, ինչպէս և ձեզ և համայն մարդկութեան համար :

Բայց եղելութեանց կարգաւ կ'ըզեմ պատմել ձեզ : ԿՁ տարեկան եմ և ամուրի, բաւական հարուստ եմ՝ ըստ կարի բարեկեցիկ վիճակ մ'ունենալու համար : Սէնի ավանց վրայ կառուցեալ սեպհական բնակավայրս կը բնակէի ի Պիէտտա, Ռուանի շրջակայքը : Կը սիրեմ որսորդութիւնը և ձկնորսութիւնը : Բնակարանիս վրայ նայող բարձրաբերձ ժայտերուն վերեւ՝ կը գտնուի Փրանսայի ամենէ գեղեցիկ անտառներէ մին, Ռուանի անտառը, և ապարանիս առջև կը պարզուի աշխարհիս գեղեցկագոյն գետերէ մին՝ Սէն գետը :

Ընդարձակ է բնակարանս, գեղաշէն և հին ոճով, յարտաքուստ սպիտակ ներկուած, շքեղ ծառերով զարթաւուն պարտիզի մը մէջտեղ, և որոյ ծայրը մինչև անտառը կը հասնի :

Տանս մէջ գտնուող անձինք կը բազկանան, և կամ աւելի ճիշդը, կը բազկանային կառապանէ մը, պարտիզպանէ մը, սենեկապանէ մը, խոհարարէ մը և լուսարար կնոջմէ մը որ միանգամայն վերակացու կին մ'էր :

Բոլոր այս պաշտօնեայք 10—13 տարիներէ ի վեր կը ծառայէին ինձ, կը ճանաչէին զիս, տեղեակ էին տանս ներքին գործերուն, կը ճանաչէին գաւառը և վարած կեանքս իւր համոյն պարագայիւք : Բարի և խաղաղասէր սպասուորներ էին անոնք : Այս կէտը կարևոր է պատմելիք դէպքերուս համար :

Կը յաւելում նաև թէ Սէն գետը, որ պարտիզիս մօտէն կ'անցնի, մինչ Ռուան նաւարկելի է, ինչպէս գիտէք, և հետեաբար ամէն օր կը տեսնէի առաքատաւոր մեծ նաւեր, կամ շոգենաւներ որք աշխարհիս չորս ծայրերէն հասնելով տանս առջևէն կ'անցնէին :

Անցեալ աշնան . ճիշդ տարի մ'եղաւ յորմէ հեաէ յանկարծ բռնուեցայ արտասովոր և անբացատրելի նեղութիւններէ : Նախ տեսակ մը ջրային մտաւանդութիւն էր որ ամբողջ գիշերներ

զիս արթուն կը պահէր, այնպիսի դառնութիւն մը՝ որ ամենափոքր ազմուկ մը սիրասութունդ կը հանէր։ Այս ցաւը երթալով սաստկացաւ։ Յանկարծական անբացատրելի զայրոյթներ ունէի։ Բըժիշկ մը կոչեցի որ ինձ պատուիրեց տուչ ընել և պնօսիւն սը բորասիօմ առնել։ Ուստի առաւօտ և երեկոյ ջրով լուացուեցայ և պնօսիւն առի։ Հազիւ թէ անկողին կը մտնէի, կը փակիլ աշերս և կը չքանայի։ Այս՝ ոչնչութեան մէջ կը գլորէի, բացարձակ ոչնչութեան մէջ, կատարեալ վախճանի մը մէջ յորմէ ընդոտ կը վարթնուի։ . . . Ո՛հ, այդ ցնցումները, աւելի սոսկալի բանի մը չեմ հանգիստ։

Երևակայացէք անձ մը որ կը ննջէ և գոր կ'սպաննեն, և որ յանկարծ կ'արթընայ՝ դանակ մը փողէն անցուած, որ կը խոնջէ արիւնաթաթաւ, որ ա՛լ եւս չնչեւ կարողութիւն չունի, որ մահամերձ է և անգիտակ իւր անձին. ահա՛ այդ էր կացութիւնս։

Հետզհետէ կը նիհարնայի, և այս՝ մտատանջութիւն կը պատճառէր ինձ. որ մ'ալ յանկարծ նշմարեցի որ կառավանս ալ, չափազանց դէր, ինձ նման սկսած էր նիհարնալ։

— Դ՞նչ ունին ժամ, ըսի, հիւանդե՞ս։

— Կարծեմ թէ տիրոջ հիւանդութենէն ես ալ վարակեալ եմ։

Գիշերները օրերս կը մաշեցնէին։

Կը մտածէի ուրեմն թէ տանս մէջ տենդաբեր ազդեցութիւն մը կը տիրէր գետին մերձակայութեան պատճառաւ, և կ'առաջադրէի հեռանալ բնակարանէս երկու երեք ամսուան համար, թէ և որսորդութեան ճիշդ եղանակն էր—, երբ անմեկնելի դէպք մը, դիպուածով նշմարուած, աչացս առջև պարզեց այնպիսի անհաւատալի, ցնորական և զարհուրեցուցիչ տեսիլ մը որ որոշեցի տեղս հանդարտ մնալ։

Երեկոյ մը ծարաւի լինելով, կէս գաւաթ ջուր խմեցի և դիտեցի որ սըրւակս, որ անկողնոյս դիմացը պահարանին վրայ գետեղուած էր, մինչև բերանը լեցուն էր։

Գիշերը դարձեալ արթնցայ ահ ու դողի մէջ։ Ծրագս վառեցի, ոտակալի սրտի անձկութենէ բանուած, և երբ ուզեցի դարձեալ ջուր խմել, սոսկիմա՞ր տեսայ թէ սրուակս պարապ էր։ Աչե՛րուս չէի կրնար հաւատալ։ Կամ այն է որ սենեակս մարդ մտած էր, կամ այն է որ գիշերաբլիկ մ'էի։

Հետեւեալ երեկոյ նոյն փորձն ուզեցի կրկնել, ուստի դուռս փակեցի բանալիով, որպէս զի ապահով լինիմ թէ ոչ ոք պիտի կարենայ սենեակս մտնել։ Բնացայ և արթնցայ, ինչպէս կ'ար-

թըննայի ամէն գիշեր։ Խմուած էր ամբողջ ջուրը զոր երկու ժամ առաջ տեսած էի։

Ո՞վ խմած էր այս ջուրը։ Ես անշուշտ, և սակայն վստահ էի, բողբոզի վստահ թէ շարժում մ'իսկ ըրած չէի իմ խորունկ և տառապադին քունիս մէջ։

Այն ատեն հնարքներ խորհեցայ, որպէս զի համոզուիմ թէ այս անգիտակից դործը կատարողն ես չէի բնաւ։ Երեկոյ մը սրուակին քով գետեղեցի հին պոռօսի շիշ մը, թաս մը կաթ որմէ կը ստկամ, և շոքոթի կարկանդակներ զորս այնքան կը սիրեմ։

Գինին և կարկանդակներն իրենց վիճակին մէջ մնացած էին, իսկ կաթն ու ջուրը աներեւութացած։ Այն ատեն ամէն երեկոյ ըմպելիներու և սնունդներու տեսակը փոխեցի. կարծր և թանձր մարմինները իրենց տեղերը կը մնային, իսկ թարմ կաթը և մանաւանդ ջուրը՝ իւր հեղուկ՝ խմուած էին միշտ։ Կասկածը սրտիս վրայ կը ծանրանար և զիս կը հիւժէր։ Ես չէի արդեօք որ գիշերանց անգիտակցարար կ'ելնէի և կ'ըմպէի մինչեւ իսկ այն բաներն որոցմէ կը խորշէի, քանզի զգայարանքներս՝ քնաշարժական քունով թմրեալ՝ կրնային փափոխութիւն կրած և սովորականէն տարբեր ճաշակներ ստացած լինել։

Այն ատեն նոր հնարք մը խորհեցայ նոյն իսկ անձիս դէմ։ Ծերմակ մուսըլինէ երկվներով կապեցի բոլոր այն առարկայները որոց անպատճառ հարկ էր ձեռք դպցնել, և կրկին պատեցի զանոնք բարակ կաւէ անձեռոցով մը։ Յետոյ, անկողին մտնելու պահուս, կապարի ջրով ձեռներս, շրթներս և պիտերս մրձստեցի։

Երբ արթնցայ, բոլոր առարկայները անարատ իրենց տեղը մնացած էին, թէպէտ ձեռք դպցուած էր, քանզի անձեռոցը իմ դրած վիճակիս մէջ չէր մնացած, և, բաց աստի, կաթն ու ջուրը անհետացած էին։ Դուռս հաստատուն բանալիով մը գոցուած և սենեկիս փեղկերը առ ի գոցուածութիւն ամուր փակուած լինելով, ոչ ոք կրնայ ներս մտած լինել։

Այն ատեն սա ահուելի հարցումն ըրի իւրովի։

Ո՞վ կար հոս, ամէն գիշեր, իմ մօտս։ Կ'զգամ, տեսաք, թէ շատ արագ կը պատմեմ։ Կը տեսնեմ որ կը ժպտիք։ Յայտնած էք արդէն ձեր կարծիքը. «Այս մարդը յիմար է»։ Երկարօրէն պարտէի նկարագրել ձեզ սենեկին մէջ առանձնացած ողջամիտ մարդու մը յուզումը ոչ սրուակի մը ապակիէն կը դիտէ թէ ննջած պահուն ի՞նչպէս աներեւոյթ եղած է ջրոյ փոքր քանակու-

թիւնը։ Պարտէի հասկցնել ձեզ թէ որպիսի չարչարանք էր որ ամէն առաւօտ և երեկոյ կը պատրաստուէր ինձ, և այն անյաղթելի քո՛ւնը և այն վարթնումներն առաւել եւս ահուելի։

Բայց կը շարունակեմ։ Յանկարծ այս զարմանալի դէպքը ընդհատեցաւ։ Ա՛լ եւս և ոչ մէկ բանի ձեռք կը դպցուէր սենեկիս մէջ. ամէն ինչ վերջացած էր։ Արդէն առողջութիւնս կը վերստանայի և հետզհետէ զուարթութիւնս կը դըրանէի, երբ լսեցի թէ դրացիներէս մին, Պ. Էլթիթ, կը գտնուէր ճիշդ այն վիճակին մէջ որոյ ենթակայ էի։ Գարձեալ սա կարծիքն ունեցայ թէ գաւառին մէջ տենդաբեր ազդեցութիւն մը սկսած էր տիրել։ Կառապանս ամէն մ'ի վեր քովէս հեռացած և ճանրուպէս հիւանդ էր։

Ձմեռն անցած էր և գարունը կը ծաղկէր։ Առաւօտ մը, երբ կը շրջագայէի վարդենիներէ վարդարուն ծաղկոցիս մէջ, յայտնապէս տեսայ իմ մօտըս, ամենէ գեղեցիկ վարդերէն միոյն իւր ցողունէն կոտրելը, որպէս թէ անտեսանելի ձեռք մը զայն քաղէր. յետոյ ծաղիկը օդին մէջ հետեւցաւ այն ուղղութեան զոր պիտի դձէր բազուկ մը այդ ծաղիկը դէպի բերան մը տանելով, և այսպէս կախուած մնաց թափանցիկ օդին մէջ, աննեցուկ, անշարժ, զարհուրեցուցիչ, ճիշդ աչացս առջեւ։

Յիմարական արհաւիրանայ ենթակայ յանկարծական շարժում մ'ըրի ծաղիկն առնելու համար։ Ոչինչ գտայ. արդէն անհետացած էր։ Այն ատեն կատապլի բարկութիւն մ'ունեցայ, նոյն իսկ անձիս դէմ։ Ողջամիտ մարդու մը ներքի չէր նմանօրինակ պատրանաց անձնատուր լինիլ։

Բայց իրօք պատրանք մ'էր այս։ Ուզեցի փնտռել ցողունը. իսկոյն գըտայ զայն թուփին վրայ, դեռ նոր կտորած, ճիւղին վրայ մնացած երկու ուրիշ վարդերու մէջտեղ, քանզի վարդերը թուով երեք էին և կատարեալապէս որոշած էի զանոնք։ Այն ատեն յուզեալ սրտիւ բնակարանս դարձայ, Խնդրեմ, ուշ գրէ՛ք, տեսաք, նախապաշարմանց կարեւորութիւն չէի տար, այսօր իսկ հաւատ չեմ ընծայեր, բայց այդ վայրկեանէն ի վեր ապահով եղայ, որքան ապահովապէս կարող եմ մուծը լոյսէն զանազանել, թէ իմ մօտս էակ մը կար անտեսանելի որ միշտ և ամենուրեք ինձ կը հետեւէր և որ պահ մը ինձմէ հեռանալէ վերջ, վերստին մօտս կը դառնար։

Ի՞նչ ժամանակ վերջ, փորձով ալ հասկցայ զայս։ Նախ սպասաւորացս միջեւ ամէն օր կատաղի վէճեր կը ծագէին արտաքուստ չնչին պատճառներու

համար, բայց յորէ անտի խորհրդաւոր ինձ համար:

Գաւաթ մը, Վենետիկոյ գեղեցիկ գաւաթ մը, ցորեկ ժամանակ ինքնիրեն կոտորեցաւ ճաշարահիս դարակին վրայ: Սենեկապանը խոհարարուհւոյն վերագրեց յանցանքը, սա ալ լուսացարար կնոջ և սա ալ չգիտեմ զո՞վ մեղադրեց: Գիշեր ժամանակ փակուած դռներ առաւօտուն բաց կը գտնուէին: Ամէն գիշեր մառանին մէջ կաթ կը գողցուէր: Ա՛հ, ի՞նչ էր, ի՞նչ տեսակ բան էր այս: Զլատեցուցիչ հետաքրքրութիւն մը, բարկութեամբ և սոսկմամբ խառն, գիշեր և ցորեկ սաստկապէս կը վրդովէր զիս:

Բայց բնակարանս անգամ մ'ալ իւր հանդարտութիւնը վերստացաւ և այս ամենքը դարձեալ երազ կը կարծէի, երբ հետեւեալ դէպքը պատահեցաւ:

Յուլիսի 20ն էր. երեկոյեան ժամը 9ը: Ծառ տաք կ'ընէր, պատուհանս բոլորովին բաց թողած էի, ճրագս ալ սեղանին վրայ կը վառէր և կը լուսաւորէր Միւսէի մէկ գրքին « Մայիսի գիշերն » վերնագրեալ գլուխն, և ես լայն թիկնաթուփ մը մէջ բազմած՝ կը ննջէի:

Արդ, չորս վայրկեանի չափ քնանալէ վերջ՝ առանց շարժում մ'ընելու բացի աչերս, չգիտեմ որպիսի խառնաշփոթ և տարօրինակ յուզմամբ մ'արթնալով: Նախ բան մը չտեսայ, յետոյ յանկարծ ինձ այնպէս թուեցաւ թէ գրքէս էլ մը ինքնիրեն դարձաւ: Հովի ամենաթեթիւ շունչ մ'իսկ պատուհանէն ներս չէր մտած: Զարմացայ և անձկանօք սպասեցի: Հազիւ թէ չորս վայրկեան անցած էր, տեսայ, այո՛, ճշմարիտ տեսայ կ'ըսեմ ձեզ, Տեարք իմ, որ գրքէս ուրիշ էլ մ'ալ կը բացուէր և միւսին վրայ կ'իջնար, որպէս թէ մարդկային ձեռք մը զայն թըղթաւոր: Թիկնաթուփ պարտապ կ'երեւէր, բայց հասկցայ թէ հոն էր նա: Մէկ ոստմամբ սենեկին մէջտեղ նետուեցայ, որպէս զի բռնեմ զնա և վերան յարձակիմ՝ եթէ երբէք կարելի լինէր: Բայց բռնելու քիչ մնաց՝ երբ աթուս գլորեցաւ որպէս թէ առջևէս մէկը խոյս տար, ճրագս ալ գիտին ինկաւ և մարեցաւ, սալակին կոտրեցաւ և պատուհանս ուժգնակի հրուելով բաղխեցաւ իւր արգելակին վրայ, որպէս թէ չարագործ մը փախած միջոցին զայն բռնած լինէր... Ա՛հ:

Իսկոյն զանգակն հնչեցուցի և երբ սպասուորս սենեակ մտաւ, ըսի իրեն որ ամէն ինչ կոտորած և տակն ու վրայ եղած լինելով, երթայ ճրագ մը բերէ:

Ալ քունս չտարաւ այդ գիշեր: Եւ սակայն կարելի է որ դարձեալ պատրանաց խաղալիք մ'եղած լինէի, և այս-

պէս զգայարանքներս վրդովեալ մնացին: Արդեօք ես չէ՞ի որ թիկնաթուփ տապալած և կանթեղս նետած էի յիմարի մը պէս յարձակելով:

Ո՛չ, ես չէի: Ապահովապէս գիտէի թէ ես չէի, վայրկեան մ'իսկ տարակուսի տեղի չկար, և սակայն այդպէս կ'ուզէի հաւատալ:

Արդ՝ այդ էակը, ի՞նչպէս պէտք է անուանել. — Անտեսանելին. ո՛չ, այդ չբաւեր, Հոռլա անուամբ մկրտեցի զայն. ի՞նչու, ճշգիւ չգիտեմ: Արդ, Հոռլան ա՛լ եւս քովէս չէր հեռանար: Գիշեր և ցորեկ այդ անշուշտիկի դրացուոյն ներկայութիւնը և սուսգութիւնը կ'զգայի, և կ'զգայի նաև թէ ժամէ ժամ, վայրկեանէ վայրկեան նա իմ կեանքս կը կարծէր:

Զայն տեսնելու անկարելիութիւնը զիս եւս քան զեւս կը դայրացնէր, ուստի բնակարանիս ամբողջ լըյտերը կը վառէի որպէս զի այդ պայծաութեան մէջ կարենամ ձեռք անցունել զայն:

Վերջապէս տեսայ, ինձ չէք հաւատար, այնպէս չէ՞, Եւ սակայն տեսայ կ'ըսեմ: Նստած էի գրքի մ'առջև, բայց չէի կարդար, միայն մարմնոյս բոլոր գործարաններովը կը լրտեսէի, կը լըրտեսէի զայն որոյ ներկայութիւնը իմ մտտս կ'զգայի: Անշուշտ հոն էր այն: Բայց ո՞ր: Ի՞նչ կ'ընէր, ի՞նչպէս կարելի էր բռնել:

Դէմս անկողինս դրուած էր, կաղնեփայտէ սիւնաւոր հին անկողին մը: Աջ կողմս վառարանն էր, ձախ կողմս ալ դուռը զոր ուժգին գոցած էի: Ետին կար դարանաւոր մեծ հայելի մը որու առջև ամէն օր կ'ածիլուէի, կը հագուէի և ուր սովորութիւն ունէի յոտից ցգլուխ ինքզինքս դիտել ամէն անգամ որ առջևէն անցնէի:

Արդ՝ կարդալ կը ձեւացունէի որպէս զի զայն խաբեմ, քանզի այն ալ զիս կը լրտեսէր, և յանկարծ զգացի, սպահովապէս զգացի թէ ուսիս վրայէն նա կը կարդար, թէ քովս կեցած էր և սկանջիս իսկ կը դպչէր:

Ոտքի ելայ այնքան արագօրէն ետիս դառնալով որ մտք մնաց պիտի իյնայի: Արդ, ցորեկուան պէս ըլլալ էր... սակայն ինքզինքս հայելոյս մէջ չկրցայ տեսնել... Հայելիս պայծառ էր և լուսաւոր, բայց իմ պատկերս մէջը չըկար... Եւ սակայն դէմը կեցած էի: Իւր բովանդակ մեծութեամբ կը տեսնէի այդ մեծ յատակ աստիկին, բոլորովին խեղցնոր կը դիտէի զայն և չէի համարձակեր յառաջմտալ, քաջ զգալով թէ իմ և հայելոյն մէջ տեղ կեցած էր այն, թէ վերստին խոյս պիտի տար ձեռքէս և թէ իւր աննշմարելի մարմինը ցլըցմանս արդեւք կը լինէր:

Որքա՛ն վախցայ: Յետոյ յանկարծ հաւելոյն խորը մուշի մը մէջ կրցայ ինքզինքս որոշել, ճիշդ այնպէս ինչպէս մարդ կը տեսնէ իւր պատկերը ջրոյ տարածութեան մը մէջ, և ինձ կը թուէր թէ այս ջուրը ձախէ յաջ կը հոսէր, յամբընթաց, վայրկեանէ վայրկեան պատկերս առաւել յատակ ցոյց տալով: Սաւարման մը վերջացումն էր կարծես: Բայց ինչ որ արդեւք կը լինէր ինձ պատկերս հայելոյն մէջ տեսնելու, յայտնապէս որոշ շրջագիծ մը չունէր, այլ տեսակ մը անթափանց թափանցակա՜նութիւն որ քիչ առ քիչ կը լուսաւորուէր:

Վերջապէս կրցայ ամբողջովին ինքզինքս որոշել, ինչպէս ամէն օր կ'որոշեմ ամէն անգամ որ աչերս հայելոյն մէջ կ'ուզեմ:

Այո՛, տեսած էի այդ էակը. սուսկու՞մը դեռ կը տիրէ վրաս:

Հետեւեալ առաւօտ հոս եկայ և խնդրեցի որ զիս վար դնեն: Այժմ, տեսարք, ահա իմ եզրակացութիւնս:

Տօքթէօն Մառուանտ ընդ երկար տարակուսելէ վերջ, որոշեց որ առանձին ճամբորդութիւն մ'ընեմ զկայի հայրենի գաւառս: Այս վայրկեանիս արդէն դրացիներէս երեքը իմ հիւանդութենէս բռնուած են: Այնպէ՛ս չէ, տօքթէօն:

Իժիշկը սպասուսանեց թէ ստոյգ է:

Պատուիրեցիք անոնց որ ամէն զիշեր կաթ և ջուր պահեն իրենց ննջասենեկին մէջ, որպէս զի տեսնէք թէ այդ հեղուկները պիտի աներևութանայի՞ն թէ ոչ: Չեր պատուէրները գործադրուեցան և այդ ըմպելիներն անհետացան, ինչպէս որ պատահեցաւ իմ տանս մէջ:

Իժիշկին հանդիսաւոր ձայնով պատասխանեց:

— Այո՛, ստոյգ է. կաթն և ջուրը աներևութացան:

Ուրեմն, տեսարք, էակ մը, նորածին էակ մը որ անշուշտ ընդհուպ պիտի ածի, ինչպէս մենք ամենքս տձեցանք, սկսած է երեւիլ երկրիս վրայ:

Ա՛հ, դուք կը ժպտի՞ք, ի՞նչու. որովհետեւ այդ էակն անտեսանելի կը մնայ: Բայց մեր աչքը, տեսարք, այն սասիճան տարրական գործարան մ'է որ հազիւ կրնայ որոշել ինչ որ մեր դոյուլութեան անհրաժեշտ է: Ինչ որ շատ փոքր է չտեսներ, ինչ որ շատ հեռու է՝ չտեսներ. նա կ'անգիտանայ այն երկիւլիոն փոքրիկ անասնիկներն որք ջրոյ կաթիլի մը մէջ կ'ապրին, կ'անգիտանայ մերձաւոր աստղերու ընակիչները, տունկերն և հողը, չտեսներ մինչև իսկ ինչ որ թափանցիկ է: Դի՛ր անոր առաջ հայելի մը առանց սնդիկի, չպիտի կըր-

նոյ որոշել և անոր վրայ պիտի նետէ զմեզ, ինչպէս տան մը մէջ բռնուած թռչուն մը որ կ'երթայ բազմաբնակ գլուխը պատուհաններուն:

Ուրեմն չտեսներ այն կարծր և թափանցիկ մարմինները որք սակայն գոյութիւն ունին, չտեսներ օդը զոր կը շնչեմք, չտեսներ հովը որ բնութեան մեծագոյն զօրութիւնն է և որ կը դետնահարէ զմարդիկ, կը տապալէ հոյակապ սարսափները, արմատախիլ կ'ընէ ծառերը, յատակն ի վեր կը բարձրացնէ ծովը, ջրոյ լեռներ ձևացնելով որք կը փլցնեն հատաքարէ քարոժայռերը:

Եւ ինչո՞ւ զարմանալի թուի ձեզ երբ նա կը տեսնէ մի նոր մարմին որոյ անշուշտ կը պակսի միակ յատկութիւնն լուսաւոր ճառագայթներն արդիւնքը: Կը տեսնէք ելեկարականութիւնը... և սակայն գոյութիւն ունի:

Այդ էակը զոր ես Հոուլա անուանեցի, այն ալ գոյութիւն ունի: Բայց ո՞վ է Հոուլան, տեսա՞ք. այն էակն է այս որոյ կ'սպասէ երկիրը մարդ էակէն վերջ, նա որ կուգայ դահլիճէն ընելու զմեզ, ընկձելու և նուաճելու համար զմեզ և գուցէ մեզմով սնանելու, ինչպէս մենք կը սնանինք եզան և խոզի մտով, Դարերէ ի վեր նորա ծնունդը կը կանխատեսեն, կը սոսկան անկէ և ահա իւր գալուստը կը ծանուցուի:

Յուշկապարիկներու բոլոր առասպելներն անոր վրայօք է որ կը խօսէին, անոր վրայ զոր արդէն մարդ էակն կանխագուշակած էր և որմէ ի վաղուց անտի կ'աշակեկէր:

Եւ ինչ որ դուք կը կատարէք, տեսա՞ք, մի քանի տարիներէ ի վեր, ինչ որ կ'անուանէք քնածութիւն (hypnotisme), թերազրութիւն (suggestion), և մագնիսականութիւն, այն է զոր կը ծանուցանէք, այն զոր կը գուշակէք:

Կ'ըսեմ ձեզ թէ նա եկած է: Կը թափառի աստ անդ, բոլորովին շուարած որպէս նախաստեղծ մարդն, անգիտանալով տակաւին իւր զօրութիւնը և իւր իշխանութիւնը զոր պիտի ճանաչէք ի մտոյ, շատ քիչ ժամանակամիջոցի մը մէջ:

Եւ ահա՛, տեսա՞ք, վերջացնելով խօսքս, ահա հատուած մը լրագրի որ ձեռքս անցաւ և որ ի Ռիօ տը Ժանէյ-նօ կը հրատարակուի: Կը կարդամ. «Խելագարութեան տեսակ մը, համաճարակ հիւանդութիւն, ժամանակէ մ'ի վեր կ'երևի թէ կը տիրէ Սէն-Բօր գաւառին մէջ: Բազմաթիւ գիւղերու բնակիչք շուտով հեռացած են, թողլով իրենց հողերն և տունները, կարծելով թէ կը հալածուին և կը դիշա-

տուին անտեսանելի սուղեղներու կողմանէ որք անոնց շնչովը կը սնանին, մինչդեռ բնակիչք քնոյ մէջ են, և կ'ըսուի թէ այդ կենդանիներն միմիայն շուր և երբեմն ալ կաթ կ'ըմպեն»:

Ես ալ սա կը յաւելում. Մահարայր հիւանդութեան առաջին տագնապէն մի քանի օր առաջ, շատ լաւ կը յիշեմ թէ պռկզիլիական եռակայմ նաւ մը իւր դրօշակը պարզած տանս առջևէն կ'անցնէր... Ըսի ձեզ արդէն թէ բընակարանս ծովեզերեայ էր... սպիտակներէ... Անշուշտ այդ նաւուն մէջ պահուած լինելու էր...:

Ուրիշ ըսելիք մը չ'ունիմ, տեսա՞ք: Տօքթիօն Մառուստո ոտքի ելաւ և մրմնջեց:

— Ես ալ նոյնպէս: Ձը գիտեմ թէ այս մարդն յիմա՞ր է թէ մենք երկուքս ի միտան... և կամ թէ... իրաւի մեր յաջորդը հասած է...:

Թարգմ. Մ. Թ.

(Կի տը Մօբալասն)

ՅՈՒՆԱՐԻՒՆԵՐ

Խոստովանողը. — «... Մեղայ ցանկութեամբ մարմնոյս. հեշտութեամբ, պղերգութեամբ, յօրանջմամբ քնոյ...» (Սոյն պահուն խոստովանահայրը երկիցս կը յօրանջէ):

Խոստովանողը. — Այս անգամ ալ, Տէր հայր, կարգը իմն է «Ասացէք մեզայ Աստուծոյ» ըսելու ձեզի...:

(Դպրոցին մէջ) վարժապետը. — Ընկերոջդ ի՞նչ գիտումով զարկիր, անպիտան...:

Աշակերտը. — Թթումով չզարկի, միւսի՛ւ, ձեռքով զարկի...:

Պարոնին մէկը փողօքը դացած ատեն ծանօթի մը կը հանդիպի զոր չը տեսնել կը ձևացնէ չբարեւելու համար, բայց յանկարծ աստիկ հովէն իւր գըլխարկը կը թռի. Բարեկամը զայս նըմարեղով անոր կը մօտենայ ըսելով.

— Շիտակը, պարոն, ձեր գլխարկն ձեզմէ աւելի քաղաքավար է եղեր...:

(Դպրոցատեանց տղան). — Այսօր փորըս կը ցաւի կոր, չպիտի կրնամ դըլորոց երթալ:

Մայրը. — Այդ փորը՛ կարէ նետէ, ցաւը կ'անցնի անմիջապէս:

— Ի՞նչ կ'ըսես, մայրիկ, կարելի՞ բան է այդ...:

— Ձէ՛, զաւակս, իրական փորիդ համար չեմ, գիտեմ թէ այն հիմակ չցաւի կոր. սա շինծու փորիդ համար կ'ըսեմ...:

ՄՏՈՍՏԻԿ

ԱՆՈՒՇԱՊՈՒՐԻՆ ԿԱԹՍԱՅԻՆ ՇՈՒՐՋԸ

Ճարճասին բոցեր, եռայ ջուրն առաս, Մանկունք խայսան շուրջ սիրով անարաս. Ժամրն արդ հասաւ, բերէք շուր ցորեն, Մեակն ալ ցընձայ հեռուն իւր ձորէն. Յորեն ձայնեցին բուրն մի բերան... Յնձուքեան ձայնիւք օրքներ փըրփըրան:

Քիչ մ'ալ, հո՛ւս, քիչ մ'ալ, անա՛ կ'աւարտի,

Լաւ անուշապուր դարձած հասն արտի:

Բարի վասակն յար չի մեար անվարձ, Ի վաղուց անտի լուծուած է այս հարց. Ճակիդ կարիքներ քէ գուր չի հոսին, Բաղդդ մի՛ կարծեք բաղուած ի փոսին. Նախ շանք անընդհաս, իսկ Եանք հապազան,

Այսպէս ժիւ մարդն իւր գրքնէ ապագան:

Հարսիկն հեզմարտի,
Տիգերն հոլանի,
Մասիւք վարդաբոյր
Ի գործ քըռանի:

Ոչ ոք կայ քափուր
Շուրջ կարսային,
Խառնէ հարսն ապուր
Մայրիւ սարգային:

Բիբերն գեղանոյ
Յառած վարդ դէմքին,
Չաւկին իւր քրնոյ
Խնդայ ցնձազին:

Հասաւ Նոր Տարին,
Նոր կեանք մեզ գուարթ,
Խնդուքեամբ վառին
Մրտեւ Եան Եան:

Բաղդին անաւոր
Բացած խորումներ,
Վանէ Ամանոր
Ճակէն սեւասուեր:

Մինչ մարուր քամած
Բաժակն դառնայից,
Ծերուկն իւր կենաց
Մոռնայ իսկ քալսիծ:

Նոր Ասքղ ցոլայ
Երկնիցն ի կամար,
Նոր կեանք մեզ տեղայ
Կենօք սիրավառ:

Ա. Հ.

— Անվարձ գրագիրն պարտի երկու նպատակ ունենալ միևնոյն նիւթին վըրայ. մին՝ եթէ խղճմտանք ունի՛ իւր անձնական գոհունակութեան համար որ անհրաժեշտ չէ, միւսը իւր պետին հաճելի լինելու համար, ինչ որ պիտանի է:

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՐՅՈՒՄ ՄԸ

«Ծաղիկ»ի ընթերցողներէն մին կը խնդրէ իրրև կրօնական յօդուածոյ նիւթ գնել Ս. Գրոց Մատթ. Ե. գլ. 23 համարն և առաջարկել ձեռնհաս անձանց բացատրելու այդ հարցն: Մի-րով կը կատարեմք իւր խնդիրը, և տը-րուած բացատրութիւններն ալ՝ ընտ-րուութեամբ՝ պիտի հրատարակեմք: Ահաւասիկ Ս. Գրոց այդ խօսքը.

«Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ և անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունի ինչ խէթ գէշն, թո՛ղ զպատարագն քո առաջի սեղա-նոյն, երթ նախ հաշտեաց ընդ եղբոր քում և ապա եկեալ մատուցիր զպա-տարագն քո:»

MAISON PHÉNIX

Մեր ընթերցողաց մասնաւոր ու-շադրութիւնը կը հրաւիրեմք «Ծաղիկ»ի յայտարարութեանց բաժնին մէջ տը-պուած Ֆէնիքս վաճառատան ծանուց-ման վրայ:

Ինչպէս կ'երևի այդ ծանուցումէն, այդ մեծ և հանրածանօթ վաճառա-տուն իւր բազմաթիւ յաճախորդաց տը-րամագրութեան ներքև դրած է ըն-տանեաց ի պէտս ամէն տեսակ ապրանք, նոր ի նորոյ պատրաստուած՝ համաձայն վերջին նորաձեւութեանց: «ԾԱՂԻԿ»ի հաստատած Յանձնարարութեան գրասենեակը նկատելով որ գաւառներ-ւէն Կ. Պոլսոյ վաճառատանց յաճախ այս կարգի ապրանքներ կ'ապստղորուն, և ապստղոյք գեղեցիկը, գլխացիունը, աժանը ստանալու տեղ կ'ստանան հը-նացած, փտած ապրանքներ ամենա-սուղ գիներով, այս մասին ծառայու-թիւն մը մատուցանելու համար գա-ւառացի ազգայնոց, մասնաւոր կեր-պով կ'ապուած է վերոյիշեալ Ֆէնիքս վաճառատան հետ որ իւր ասորանաց ընտրութեամբ, գեղեցկութեամբ, գլխ-մացկունութեամբ և միանգամայն ա-ժանութեամբ կը մրցի հրապարակի վը-րայ գործող ըտրը մեծ վաճառատանց հետ: Ուստի Գրասենեակս կը յայտա-րարէ թէ, պատրաստ է ինքն իսկ ըս-տանձնել այս կարգի յանձնարարու-թիւններն և փութով և ամենայն ճշ-դութեամբ կատարել, կը բաւէ որ յանձնարարողը որոշ նշանակած լինին ուղուած ապրանք տեսակները, չա-փերը և մտաւոր գիները:



ԱՅՆ ԵՒ ԱՅԼՔ

Ելեֆրականութեան քննադատութիւնը. — Վերջերս ի Փարիզ, Օբէրայի զիմացը գտնուող մեծ Պուլըվառի շօտէին տախ-տակամածը, ընդարձակ երկայնութեան մը վրայ, յանկարծ կէս մէթր բարձրա-ցած է. նոյն պահուն անկից անցնող-ներուն զարմանքն խիստ մեծ կը լինի, և ոմանք վայրկեան մը կը վախնան որ գուցէ Փարիզի մէջ հրաբուխ մը պիտի կազմի: Մի քանի վայրկեան վերջ, հողը իւր առջի վիճակին ստացած լինելով, ու-րիշ ո և է դէպք մը պատահած չէ. այս դէպք ելեֆրական հոսանաց վե-րադրուած է:

Կուլայի փուռ-շեմանոցը. — Նոր հնարուած ամանի մը անունն է այս, որ կերակրոց պատրաստութեան պիտի դործածուի, գրուելով կազով, ա-ծուխով և կամ քարիւղով տաքցած հը-նոցի մը վրայ: Այնպէս շինուած է որ տաքութիւնը չկորսնցնելով, առա-ւելութեամբ պիտի ընդունի. այս պարզ ամանով կարելի պիտի լինի շատ դիւ-րութեամբ և խնայողութեամբ եփել, խորովել և տաքցնել ամէն տեսակ կե-րակուր, լինի մսեղէն, խմորեղէն, շա-քարեղէն, կարկանդակ, և ըն:

Կեկղանի գոհարներ. — Թէ ճարտա-րարուեստը ինչպէս կը յառաջագիւծեն, ահա օրինակ մ'եւս: Ամենքն ալ գո-հարներէ շինուած՝ կան աքաղաղներ և բաղեր որք կ'երգեն շարժելով իրենց կտուցն ու սրշ, տեսակ տեսակ շուներ որք կը հաչեն շարժելով իրենց գլու-խը, այլ և այլ թռչնոց գլուխներ որք կ'երգեն նման բնականին, մեռելոց և խափշիկներու գլուխներ որք իրենց աչ-քերը կը դարձնեն ու դէմքն՝ ահաեկի կերպով կը ծուռուեն, և ըն: Այս գո-հարներն կը գործածուին իրը զարդ, դրուելով փողկապներու վերայ, և իբր պրօշ՝ կանանց մազերուն մէջ. ուղուած ժամանակ շատ դիւրին է զանոնք շար-ժել ու երգել տալ:

Փոքր մոլորակներ. — Պ. Շարլուա, ի Նիս, 4 հատ փոքր մոլորակներ գտած է. փոքր մոլորակաց թիւն է այժմ 320:

Մարտի օդապարիկը. — Սեպտեմ-բեր 6ին Պ. Մարչէ իւր սեպհական օ-դապարիկովը բարձրացած է մթնոլոր-տին վերի խաւերը, նպատակ ունենա-լով որոշելու թէ հոն հովի սաստկու-թիւնն ի՞նչպէս է բաղդատմամբ երկրի վրայ եղած հովի սաստկութեան: Իբժ-բաղդաբար իւր փափաքանաց կատար-եալ գոհացում չէ կրցած տալ:

Հնձոց ժամանակը. — Ամիս մը չը-կայ որոյ միջոցին ո և է ժողովուրդ մը հունձքով չգրադի: Յունվարի մէջ կը հնձեն յԱւստրալիա, ի նոր Զէլանտա,

Զիլի և Արժանթինի Հանրապետու-թեան մի մասին մէջ: Փետրուարի մէջ հունձքը կ'սկսի ի Հնդկաստան և ի վե-րին Եգիպտոս, և կը վերջանայ Մարտի վերջերը ստորին Եգիպտոսին մէջ: Ապ-րիլի մէջ է որ կը հնձեն ի Կիպրոս, Պարս-կաստան, Փոքր Ասիա, Հնդկաստանի մի մասը, Մէքսիկա և Քուպա: Մայիսի մէջ, Ալճերի, Կեղրոնական Ասիա, Չին ճափօն, Մարօք, Թէքլաս և Լա Ֆլօ-րիս: Յունիս է հունձքի ժամանակ Դա-նուբեան իշխանութեանց, Հունգարիոյ, Պուլիարիոյ, Յունաստանի, հարաւային Ռուսիոյ, Իտալիոյ, Սպանիոյ, Փոր-թուկալի, հարաւային Ֆրանսայի և Մի-ացեալ-Նահանգաց մի մասին: Յուլիսի մէջ է որ կը հնձեն ի Գերմանիա, Աւստ-րալիա, հիւսիսային Ֆրանսա, Զուիցե-րիա, Ռուսիա, Ահաստան, Անգլիա և Միացեալ-Նահանգաց հիւսիսային նա-հանգները: Օգոստոսի մէջ կը հնձեն ի Պէլճիքա, Հոլանտա, հիւսիսային Անգ-լիա և Տանիարքա: Սեպտեմբերի մէջ Սկովաիա, Շուէտ-Նորվեգիա և հիւսի-սային Ռուսիա: Հոկտեմբերի մէջ հունձ-քը կը վերջանայ ի հիւսիսային Սկով-աիա: Նոյեմբեր և Դեկտեմբեր, հիւսի-սային Աւստրալիոյ, Փէրուի, հարաւա-յին Ափրիկէի և Պրմանիոյ հնձոց ժա-մանակներն են:

Այնքապ ԹՃԹՈՒՆԸ ՔԻՈՒՆԵԼՆԵՆ

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

— Եպարուիլ ու պճնազարդիլ կը նշանակեն երիտասարդութեան սուգը բռնել կարմիր հագուստով:

— Երեւակայեցէք գոց տուփ մը ս-րուն մէջ ճշմարտութիւն և ստուծիւն անուամբ երկու մարախ դրուած լինին. եթէ զայն բանալ հարկ լինի՝ վստահ ե-զիք որ առաջին դուրս ցատկովը պիտի լինի Ստուծիւնն:

— Կնոջ քմահաճոյքները լրագրաց ազգերու կը նմանին. միշտ հակամէտ են փոխուելու:

— Երջանկութիւնը կը տեւէ ակն-թարթի մը չափ, իսկ վրշտն՝ ո՛րչափ ատեն որ բաց աչք մը կարէ գլխանալ:

— Արդուզարդով գեղեցկացած օ-րիորդներն նման են ցորեններու մէջի հարսնուկներուն, որոց կարմրափայլ տեսքը միայն կ'երևի. բայց խոհական անձն անոնց չմտենար փրցունելու համար:

— Պարծելու չեմք բնաւ մեր ու-նեցած հարստութեան կամ աստիճա-նին վրայ, վստն զի արեգակն իսկ եր-բեմն կը խաւարի, բայց փոքրիկ աստ-ղերը միշտ փայլուն կը մնան:

Խորհեցաւ ՄՏՈՍՏԻԿ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատեօմարաւիտիւնք. — Վանայ կուսակալ անուանեցաւ Պահրի փաշա, նախորդ կուսակալ Շքոտարայի: — Վանայ Ազրակ գաւառակին գայմագամ անուանեցաւ Պէհաէտտին պէյ, գայմագամ Մամուրէթ-իւլ-Համիրի, և իրեն յաջորդեց Վէլէտտին էֆէնտի, նախորդ գայմագամ Րէսէլայի: — Բաղէշի Մութիքի գաւառակին գայմագամ անուանեցաւ Օսման Նաֆլը էֆէնտի, նախկին գայմագամ Չարչանպայի: — Գասթամունիի Մէտրինէ գաւառակին գայմագամ անուանեցաւ Պէհէթ էֆէնտի, նախկին գայմագամ Փաթսէի: — Երուսաղեմայ գաւառին կալուածատրոց անորէն անուանած է Մուսթաֆա Ֆէհմի էֆէնտի, կալուածատրոց նախորդ անորէն Բաղէշի:

Ասիւնանք. — Սանիլէի Բ. աստիճան տրուեցաւ կարնոյ նահանգին Իտարէի ժողովոյ անդամներէն Տէրփիլ էֆէնտի: — Սալիսէի աստիճան՝ նոյն նահանգին թղթակցութեանց գիւտանին Ա. քարտուղար Մէհմէտ Ֆիլի էֆէնտի և Իտարէի ժողովոյ Ա. քարտուղար Ալի Սըրրի էֆէնտի: — Բալիսայի աստիճան՝ նոյն ժողովոյ Ա. քարտուղարին օգնական Ֆուսա պէյի:

Պատուանք. — Գ. կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Օրտուի գայմագամ Մէհմէտ Ալի էֆէնտի: — Դ. կարգի Մէհմէտի պատուանշան տրուեցաւ Միլիսէի վարժարանին Փրոֆեսորներէն և Սուլթանիյէ վարժարանին Լատիներէնի ուսուցիչ Պ. ժէնմէն Լէսքանի: — Ե. կարգի Մէհմէտի Պարսկալի երեկոններէն Նշան աղայի ու եղբորը Սաեփան աղայի:

— Նդեսիայէն մաս մը զինուոր զրկուեր է՝ ետ առնելու համար Շէմէրի ու այլ Աշիրէթներու կողմանէ: Եգեսիոյ Աշիրէթներէն ու ժողովուրդէն առնուած աւանները, Չինուորք սկսեր են եղեր ետ առնուլ այն Աշիրէթներէն Պէքեարէ անուն Աշիրէթին քով գտնուած 4500 ոչխարը, ինչպէս և Շէմէր Աշիրէթին քով գտնուածները. իսկ Ամուտ ու ձէմին Աշիրէթներու քով գտնուածներն ալ յետոյ ետ պիտի առնուին:

— Սպանուեր է Տրապիզոնի ետեմըն գիւղախմբին բնակիչներէն Գօջղլու Մուսթաֆա անուն աւազակը. իսկ նորա ընկերը՝ ինձեօղլու Հիւսէին՝ որ վերաւորեալ վիճակի մէջ փոխած է, ամէն կողմ կը սնանուի:

— Խարբերդի կեդրոնին մէջ գըտնուող զինուորներէ Յորդ գնդին երրորդ վաշտը Տիարպէթի և 26րդ գնդի երկրորդ վաշտին Բ. գումարտակն ալ Բալու զրկուած է:

— Կարնոյ նահանգին չըջակայ օտար սահմանադիրոց վրայ հաստատեալ ինը շղթայներու համար հարկ եղած անցագրի պաշտօնեայք ի մօտոյ այդ տեղերը պիտի զրկուին:

— Սեբասիոյ երկրագործական դըրտմատան անորէն Ահմէտ Նէճաթի էֆ. ի Սինոպ բերդարգելութեան գատապարտուած է գործած զեղծումներուն համար:

— Բժեկական վարժարանին մէջ ներքին խտարանութիւն ուսուցանելու համար մայրաքաղաքս պիտի կոչուի Փրոֆեսոր Թալիսկարգ բժիշկներէն Տօքթէօր Ժիլլէն:

— Անպատեօմ մնացած և հանգստեան կոչուած քաղաքային պաշտօնէից սպորտսան աւելի եւս ապահովելու համար կանոնադիր մը պատրաստուած է:

— Սելանիկէն կը պաշտօնադրեն թէթէքուշի մէջ ութ աւազակներ ձերբակալուեր են և ասոնց ընկերներէ ուրիշ աւազակ մը սպաննուեր է:

— Նիկովիդիա-էնկիլիւրի երկաթուղւոյ գծին ուղիները հարթուած և երկաթները մինչեւ էսկի-Շէհիր զետեղուած են: Այս գծին անցած տեղերու տասանորդի տուրքը, որ անցեալ տարի 120.000 ոսկեւոյ վարձակալութեան տըրուած էր, այս տարի տրուած է 180.000 ոսկեւոյ:

— Դամասկոսի առողջական փիճակը սկսած է բարւոքիլ:

— Շիրէքը-Սուլթանիյէ անուամբ շոգենաւային ընկերութիւն մը հիմնելու արտօնութիւն խնդրած են Կէլիպօլուի թաղապետական նախագահ Մուսթաֆա Ասիմ էֆէնտի և նոյն քաղքին երեկոններէն Պ. Սթէլիանոս: Ընկերութիւնը շոգենաւներ պիտի բանեցնէ Մարմարայի ափական և եւրոպական եզերքները և Տարտանէլի ու Մարմարա կղզւոյն միջեւ, և շոգենաւք փոթորկի ժամանակ պիտի ծառայեն նաւերու վերկութեան: Բաժնետերք Օսմանեան հպատակ պիտի լինին:

— Սեբասիոյ գայմագամ Նաթի էֆէնտի գատաստանի ենթարկուած է:

— Էնկիլիւրի Գարապաշ անուն տեղը նախնական վարժարան մը հաստատուեր է:

— Չերակալուեր է Օրտու գաւառակին մէջ Եթէթիօղլու Ահմէտին ընկերը, Չափուչօղլու Միւլէյման անուն աւազակն: Նոյնպէս ձերբակալուեր է ձանիկի թռնմէ գաւառակին մէջ ուղեւորներ կողոպտող աւազակներէ Կուրճի Մահմուտ:

— Իսպական նոր գետտան Պ. Րէսման մայրաքաղաքս եկաւ:

— Յուսուսանի Միլի Գալամաթա երկաթուղւոյ գիծը շինող ընկերու-

թիւնը՝ շինութիւնը չաւարտած՝ իւր վճարումները դադարեցուցած, և դործաւորք անվճար մնալով թշուառութեան մատնուած լինելով, Վեհ. Սուլթանին հրամայած է Աթէնքի Օսմ. դեսպանին՝ այդ դործաւորաց մէջ գտնուող 283 օսմանեան հպատակ դործաւորաց պէտք եղած օգնութիւնն ընելով եւ ճամբու ծախքը տալով, իրենց տեղերը դարձնել:

— Գարասիի Եսթէմիտ գաւառակին Իւնեա գիւղախմբին մօտերը գտնուած արծաթախան կապարի, անթիփօնի ու պօռաթի հանքերուն մէջ խուզարկութիւններ կատարելու մեխանիկ ստացած են Ըպրըգտար գատէ Մէհմէտ ձէմիլ պէյ ու ընկերը Մինաս էֆէնտի Տէր Միքայէլեան:

— Խարբերդի կուսակալ Րէսէլ փաշայի պաշտօնավարութեանը վրայ դուրստիւր կը խօսի Սասէթին ուղղեալ նամակ մը:

— Կայս. Իրասէ մը հրամայած է մայրաքաղաքս բերել տալ և սրահել ընկըմեալ էրքոդուլ մարտանաւէն աղատուած դոյքերը: Փոխադրութեան գործը յանձնուած է շոգենաւային Միսաթըրի ընկերութեան:

— ՅՄրապիլի մէկ քանի չարագործք տեղւոյն բողբոսկանաց աղապետի փոխանորդին տունն այրել փորձեր են, սակայն տեղական կողմավարութեան ջանիւք փոանգին առաջին առնուեր է: Գէշէլի Յովհաննէս և Չէնթիք օղլու Միսաք անուն անձինք ձերբակալուեր են իրրեւ մեղաւից:

— Սեբասիոյ նահանգին արկալակ Անդրանիկ էֆէնտի՝ ըստ Սապանի՝ 384.000 զրջ իւրացուցած լինելով, նորա մայրաքաղաքս գտնուող երաշխաւորաց ստացուածքն գրաւի ենթարկուած են:

— Տրապիզոնի ձանիկ գաւառն ու Օրտու գաւառակն եգիպտացորենի արտածումն արգիլուած է մինչև հընձոց ժամանակը:

— Պանսումայէն ի Միլիսլըճ թղթատարով զրկուած աւանդից պայտուակէն 50 մէճիտիյէ պակամ լինելով, քննութիւն բացուած է:

— Կիւմիւլիցէի չըջակայ գաւառակաց երկրագործական դրամատանց ճիւղերու հաշուակալութեան քարտուղարաց մեծ մասն՝ երկրագործներէ առնուած 1000 զրուչնոց պարտամուրհակի փոխարէն 8-900 զրուչ կուտան եղեր, անտուկին մէջ դրամ չլինելը պատրուակելով և մնացեալ յետոյ տալ առաջարկելով. իսկ ի վերջոյ՝ չտալով՝ յաւելեալ գումարը կը գրպանեն եղեր: Թեոնէաս իշխանութիւնը հրամայած է քննել այս պարագայներն ու այդ սնտուկներու հաշիւները:

— Դումասկոսի թղթատարը որ ցարդ Մուսանիա-Պրուսոյի ճամբով կը զրկուէր, երկաթուղիով ու Պիլէճիկի ճամբով պիտի զրկուի այսուհետև :

— Յանձնաժողով մը կազմուած է քննելու համար թէ մայրաքաղաքիս ու արուարձանաց մէջ ս'ըջտի կէտիկ ունեցող, շէրայէրխանէ կոչուած ու կէտիկ չունեցող գինետունք կան, ինչ տեսակ արտօնութիւններ ունին, և ինչ Յանձնաժողովը՝ ի հարկին այդ գինետանց դիրքը սրտչելու համար քարտէսներ ևս պիտի պատրաստէ և գինետունները կանոնաւորելու համար պիտի դիմէ հարկ եղած միջոցներուն :

— Միւսիւրուբեան պաշտօնի չպիտի կրնան կոչուիլ ընտրելութեան վկայական չունեցող անձինք :

— Պուլսայի էրբողուլ գաւառին մէջ առեւտրական յանձնաժողով մը պիտի կազմուի, 60է աւելի մետաքսի գործարաններ գտնուելուն և մետաքսի մեծաքանակ գործողութիւն կատարուելուն համար անդ :

— Լուրժը Հիւմայուն Բ. կարգի մարտանաւուն ու Շահինը Տէրեա թորբիլահալաժին շինութիւնը փութով յաւասը կը տարուին :

— Արիանուպոլսոյ և Չորլուի միջև հեղեղանման անձրևք երեքշաբթի գիշեր աւրեր են երկաթուղւոյ գիծը : Չորեքշաբթի երեկոյ մայրաքաղաքէս մեկնող կառախուսիքը գծէն ելեր է 257—800րդ քիլոմէթրին վրայ, Բավլօ քէտի և Ուզուն-Բէօրիւի միջև, առանց մարդու վնաս պատճառելու : Հինգշաբթի առաւօտ աստ սպասուող կառախուսիքը կեցեր է ի Բուլէլի Պուրկազ : Խանգարուած գիծերու նորոգութիւն մինչև երէկ երեկոյ տակաւին չէր աւարտած, և սակայն ճամբորդները՝ ճամբուն աւրուած մասերէն ուրիշ միջոցով անցունելու համար, չորեքշաբթի օր Պոլիս ժամանող արևելեան ձեւը պընթաց կառախուսիքը՝ երեք երեկոյ մեկնելիք եւրոպական կառախուսիքին տեղ մեկնեցաւ մայրաքաղաքէս մի քանի ճամբորդներով :

— Լեւանիկի նահանգին ամէն կողմը էնֆլուէնցան ճարակեր է :

— Այսընի նահանգին տարեցոյցն հըրատարակուած է և կը պարունակէ շահեկան տեղեկութիւններ :

— Ենձլուէնցայի միգրուլը գտեր է եղեր Գերմանացի Տօքթօր Բֆէյֆէր :

— Եգիպտոսի Լըսիլ Մէհմէտ Թէվֆիդ փաշայի մահը հեռագրուած է Գահիրէին : Երբ լուրը մեռեր է էնֆլուէնցայէն : Իրեն յաջորդ կարգեցաւ Բարձ Ապաս Հիւմի փաշա :

— Չիբիհեան Սեդրաֆի ու Միրիճանեան Յովհաննէսի միջև կուռոյ ա-

ռարկայ եղող Բոււմէլի երկաթուղեաց 600,000 Ֆրանք շահող արժէթուղթը՝ ըստ Սապանի՝ անցեալ շաբթու Չիրքինեանի կողմանէ վիեննայի Անկլօ-Օթրիչիէն անուն անգլիական և աւլստրիական պանքային զրկուելով և զեղչել տրուելով, գանձուեր է : Այս անգամ յիշեալ Պանքան արժէթուղթը Օսմանեան Պանքային զրկած է եղեր՝ փոխարէնն ամբողջապէս դանձելու համար :

— Դասասանի ենթարկել հրամայուած է՝ Բազլի վարթօ գաւառակին նախ ու նախնական դատարանին նախագահ Ալի Րիզա էֆէնտին, նոյն դատարանի նախորդ անգամ Շէյխ Իպրահիմ էֆէնտին ու անգամ Ասատուր էֆէնտին և Պուլանքը գաւառակի նախ ու նախնական դատարանին նախագահ Հասան Յէյմի էֆէնտին և նոյն դատարանին անգամ Մկրտիչ էֆէնտին և Ա. քարտուղար Ապուրև Ազիլ էֆէնտին, որք իրենց պաշտօնավարութեան մէջ օրինաց հակառակը գործած են :

— Յերուաղէմ, լերան մ'ստորոտը փորուած պահուն երևան ելած քարայրի մը մէջ այլ և այլ հնութիւնք և երկու գերեզմաններ գտնուեր են :

— 120 արեկան Հինալի Հաճի Սէլիմ անուն մուրացիկ մը, կ'ըսէ Սապան, զաւակ մ'ունեցեր է :

— Նամակադրուած նոր ձեւի պիտի վերածուին յառաջիկայ 1308 տարիէն :

— Զմիւռնիայէն հինգշաբթի օր մայրաքաղաքս բերուեցան կատաղած չունէ խածնուած հինգ անձեր, բժշկական վարժարանին մէջ դարմանուելու համար :

— Սէնէսաքի վարչութեան պաշտօնեայներէն Հագգը էֆէնտին 10, Խոճա Սաատուլլահն 11, և Տէրվիչ ու Արիֆ էֆէնտիք մէկ մէկ տարւոյ բանտարկութեան դատապարտուեցան, վասն զի քափուր կեզձ սէնէներ ու փոխանորդագրեր պատրաստելով՝ Պուլիարիոյ ու Արեւելեան Բոււմէլի ժողովրդեան տըռած էին :

— Պրուսայի մի քանի մզկիթներուն կարևոր մասանց նորոգութիւնը հրամայուած է :

— Զմիւռնիոյ կողմերը ցամաքը խըրած Լոյտի ընկերութեան Սօնօ չոգենալին մէջ գտնուող ճամբորդք և թըլթարական պայուսակք երկուշաբթի առաւօտ Աքիսի չոգենալով Զմիւռնիա փոխադրուեր են, երէկ մայրաքաղաքս եկած հեռագիր մը կը ծանուցանէ խըրեալ չոգենալուն պատուովը :

— Երուպայի դրամասեաց խուսի մը կայս. կառավարութեան առաջարկած է երկաթուղւոյ այնպիսի գիծ մը շինել որ Լոնտոնէն երթայ ուղղակի Պարսա, Պարսից ծոցը : Այս ընկերութիւն այս նպատակաւ կամուրջ մը պիտի շինէ եղեր Մանչի ծովուն վրայ, Անգլիոյ եւ Ֆրանսայի միջև :



ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ԾԱՂԻԿ»

Վրոյր, Բաբեղ. — Այդ Հայկազն ստորագրողին՝ ըստ ձեր տուութեան՝ թշնամական սուտ և զրպարտիչ սողերն հերքելու համար, շարժեր զոհել «Ծաղիկ»ի մէկ երկու սիւնակը. կրնաք կարեորութիւն չտալ այդպիսի գրութեանց և բաւականանալ արհամարհական լուսթեամբ մը :

Մ. Քան. Ն. յԱլէքսանդրիա. — Ձեր բաժանորդագրութիւնը կրնաք գաղթեցնել, վասն զի մեք բաժանորդագին չեմք ստանար բաժանորդաց գրութիւնները հրատարակելու համար, այլ փոխարէնը թերթ տալու համար. Ձեր բաժանորդագնով իրաւունք չունիք բռնանալու մեր վրայ որ անպատճառ սըպեմք ձեր գրածներն. կան գրութիւններ որոնք «Ծաղիկ»ի համար անյարմար լինելով չեն հրատարակուիր, կան ալ որ մեր կամքէն անկախ պատճառներով չեն հրատարակուիր. մեք ո՛չ ժամանակ և ո՛չ պարտաւորութիւն ունիմք ամէն անգամ բացատրութիւններ տալու հրատարակութեան համար մեզ յօդուածներ զրկողներուն. ինչ որ կարելի է տպել՝ կը տպեմք, ինչ որ չէ՛ չեմք տպեր. գանգաւորը, նեղանալը, սպառնալը, ասոնք աւելորդ բաներ են. մանաւանդ անպատշաճ բան է չհրատարակուելուն համար՝ Խմբագրին նըպատակներ վերագրելը :

Ն. Վ. Կարին. — Կը զրկեմք. թըլթագրոջմ՝ կ'ընդունուի :

Մ. Յ. Ս. Եսիրէ. — Քառորդ սուկին ստացանք : «Ծաղիկ»ի համար յարմար չեմք տեսներ հրատարակութիւնը :

Մսնսիկ յիւսկիւսար. — Այո՛, տըպուած է. գինը 2 զրուշ : «Անակընկալ»ը չեմք կարող տպել :

Տ. Փ. Նրիգա. — Առ այժմ պահեցէք : «Նկարագրութիւն»ը զրկեցէք :

Դեղասեղ ի Պոլիս. — Ձեմք կարող այդ կարգի գրութիւններ հրատարակել : Կարող էք զրկել այդ կարգի գրութիւնները քաջալերող թերթերուն :

Ա. Հ. Իզմիր, Անը-Պասէմ. — «Պրտոյտ»ը 14 զրուշ. «Սիկար, Գ. տարի»՝ 25 զրուշ. «Աղգային Զօլեր Բ. և Գ. հատորներ»՝ 12ական զրուշ :

Դ. Վ. Յ. Նուսալէմ. — Ստացած էք Իզմիրէն Ձեզ զրկուելիք գիրքերը :

Թ. Յ. Եսիրէ. — Ձեր յանձնարարածները ժամանակին զրկեցինք. կը յուսամք որ ստացած էք :

Մէճիսիյէ	107 38 2/3	102 20
Քառորդ մէճի	106 10 1/2	89 20
Մանր մէճի	101 20 1/2	87 2
Մէթալիք	97 20 1/2	51 40
Հինգնոց	101 20 1/2	409 30
Մանր թղթագրում	9 27	
Գոնսուլիտէ	20 3 1/2	66 7/8
Թահիլ 0ւմ	77 20 1/2	22

18)

Մ Ե Ռ Ե Ա Լ Կ Ի Ն Ը

Մայիսի ամիսն էր. օրը խաղաղ և գեղաձիճաղ եղած էր և գիշերն ալ ո՛չ նուազ գեղեցիկ էր: Ալիքի, հանուկէ առաջ, իւր սենեկին պատուհաններուն միոյն յենած էր՝ շքեղ և համար այն անորոշ հոտերը զորս կը սփռէին օդին մէջ նորաբոյս դալարիք, դեռահաս մանիչակիք և շուշանք անտառաց: Երկինքն աստղերով լուսաճաճանչ, աստեղական սպիտակ ալօս լուսով մը կ'ողողէին մայրեւորներու դեռաբոյս տերեւներն և գիւղերու ասարածութիւնը: Մտածկոտ հայեցողութեան մէջ ընկղմեալ, Վալմուէթի մանկամարդ դղեկուհին յանկարծ թեթեւ սարսուռ մը զգաց: Օրիորդ Թալլըվօի վայելուչ ստուէրն տեսեր էր որ կ'անցնէր դարաստանին մէկ ծառուղւոյն մէջէն՝ իւր քայլերն ուղղելով դէպ ի մի ուրիշ ծառուղի որ կարծ ճամբով կա Սօլէյէն մի քիչ հեռի վայր մը կը տանէր...: Կէս գիշերին իբր մէկ ժամ մնացած էր, երբ Պ. տը Վօտուիգուռ...: Աւելի լաւ, կարելի է... քանզի դժուարին չէ այդ, բայց աւելի երջանիկ, քիչ մը կը կասկածիմ...: Ես ինքս շատ ուսած եմ, գիտէ՞ք... այս երկնից համաստեղութեանց մէջ չկայ մէկ հատ որոյ անունը, դաստորութիւնը, շարժումը անգիտանամ, չկայ այս անտառաց մէջ ննջող միջատ մը որոյ հրաշալի կազմութիւնը, ցեղը, տեսակն և բնութագրութիւնները չճանաչեմ, — չկայ այս ճամբուն վրայ քար մը որոյ երկրաբանական տարրը չկարենամ ձեզ ըսել — չկայ մամուռ մը, ոչ ալ ցողի կայլակ մը զոր չկարենամ վերլուծել վերջին աստիճան ճշգրտութեամբ... և այսու հանգերձ չեմ համոզուած որ առաւել երջանիկ լինիմ, ոչ իսկ լաւագոյն:

Շուտով իրարու մօտեցան.

— Ինչպէ՛ս, դուք էք, օրիորդ, ըսաւ Պեռնառ, ամենահանգարտ ձայնիւ, կարծեցի թէ ձեր ստուերն էր:

— Ո՛չ, պատասխանեց գեռատի աղջիկը մի և նոյն հանդարտութեամբ. ստուերս չէ, ես ինքս եմ...: Գիշերուան գեղեցիկութիւնը զիս յանկոյց և այս ծառուղւոյն մէջ շրջագայութեան ելայ, ձեզ հանդիպելու անորոշ յուսով մը:

— Ձեմ հաւատար...: Կարծեմ թէ ասաղերու լուսով անտառին մէջ դիւթական խոտեր քաղելու նպատակաւ դուրս ելած էք:

— Կախարդ կնոջ մը՞ նման:

— Դեռատի և գեղանի կախարդուհւոյ մը նման:

— Շատ բարեսիրտ էք, պարոն, ետ պիտի դառնանք, այնպէ՛ս չէ:

— Եթէ կ'ուզէք:

— Բնականաբար:

— Եւ դղեկին ճամբան բռնեց Պ. տը Վօտուիգուռի ընկերակցութեամբ: Իւր սովորականին հակառակ, օրիորդ Սապին թեթեւ իմն շփոթած կ'երևէր, քանզի մտազբաղ կերպով կը հանէր և վերասին կը դնէր իւր ձեռնոցներէն մին:

— Մարդ չէ կարող երեւակայել, ըսաւ, գիշեր աստեն անտառաց մէջ լսելի եղած այս արտասովոր աղմուկները:

— Վախցա՞ք միթէ:

— Ի՛նչ կատակ: Ո՛չ... բայց մէկ երկու անգամ ինձ այնպէս թուեցաւ թէ անտառին մէջ քայլելու ձայն մը լսելի կը լինէր:

— Շատ կարելի է: Գաղտորսակներ չեն պակսիր աստ:

— Ո՛չ ալ գաղտորսակուհիներ, յարեց օրիորդ Թալլըվօ ծիծաղելով:

— Գաղտորսակուհիներու համար փոյթս չեմ ըներ, ըսաւ Պեռնառ մի և նոյն շեշտով...: Կ'ուզէ՞ք թեւս մտնել, օրիորդ:

— Ո՛չ, շնորհակալ եմ:

Վայրկեան մը լուռութիւն տիրեց, յետոյ Սապին յարեց.

— Ի՞նչ բանի վրայ խօսեցաք պաշտպանիս հետ:

— Շատ լուրջ խնդիրներու վրայ. գիտութեան վրայ, իմաստասիրութեան վրայ, կրօնի վրայ:

— Այդ խօսակցութիւնը ձեզ օգտակար կրնայ լինիլ:

— Կը յուսամ, ըսաւ Պեռնառ, բայց, ցարդ, առաւել դառնութեամբ կ'զգամ այն հեռավորութիւնը որ ձեր պաշտպանին նման անձէ մը զիս կը բաժնէ...: Եթէ անոր նման ես ալ կեանքս ուսման, գիտութեան նուիրած լինէի, փոխանակ զայն զեղխութեամբ անցունելու յիմարական հաճոյից մէջ, աւելի լաւ և աւելի երջանիկ պիտի լինէի:

— Կը կարծէ՞ք, Պարոն տը Վօտուիգուռ...: Աւելի լաւ, կարելի է... քանզի դժուարին չէ այդ, բայց աւելի երջանիկ, քիչ մը կը կասկածիմ...: Ես ինքս շատ ուսած եմ, գիտէ՞ք... այս երկնից համաստեղութեանց մէջ չկայ մէկ հատ որոյ անունը, դաստորութիւնը, շարժումը անգիտանամ, չկայ այս անտառաց մէջ ննջող միջատ մը որոյ հրաշալի կազմութիւնը, ցեղը, տեսակն և բնութագրութիւնները չճանաչեմ, — չկայ այս ճամբուն վրայ քար մը որոյ երկրաբանական տարրը չկարենամ ձեզ ըսել — չկայ մամուռ մը, ոչ ալ ցողի կայլակ մը զոր չկարենամ վերլուծել վերջին աստիճան ճշգրտութեամբ... և այսու հանգերձ չեմ համոզուած որ առաւել երջանիկ լինիմ, ոչ իսկ լաւագոյն:

— Երկնից ներքև դուք միայն գիտէք, կը կարծեմ, ինչ որ կ'անցնի ձեր գլխէն ու սրտէն:

— Թերե՛ւս:

— Օրիորդ Թալլըվօ:

— Պարոն տը Վօտուիգուռ:

— Այս առանձնութեան մէջ կրնամ ձեզ հարցնել թէ ի՞նչ է ձեր կրօնքը:

— Պաշտպանիս կրօնքը բնականաբար:

— Եւ դուք կը խորհի՞ք թէ այդ կրօնը պիտի բաւէ ձեզ դիմադրելու աշխարհիս ամէն փորձութեանց, մինչև իսկ հզօրագոյն, մինչև իսկ ահաւելի փորձութեանց:

— Յարդ բաւական եղած է ինձ իմ կրօնը՝ ամէն փորձութեանց դէմ:

— Ուրեմն, օրիորդ, պիտի բարեհաճիք անշուշտ ինձ ալ բաժնի մը շնորհել ձեր այդ կրօնէն... վասն զի ձեր հօրեղբայրն՝ հակառակ իւր համոզման և պերճախօսութեան՝ դեռ չյաջողեցաւ... և սակայն երբէք այս աստիճան մեծ պէտք չէի զգացած ապահովութեան և խղճի հանդարտութեան, զի խիղճն է միայն որ կրնայ տալ դերագոյն հաւատք մը:

— Կ'ուզէ՞ք լրջօրէն, Պ. տը Վօտուիգուռ, որ իմ կրօնս քարոզեմ ձեզ:

— Ամենայն լրջութեամբ:

— Բայց այս մեծ վիշտ պիտի պատճառէ ձեր սիրելի տիկինը:

— Կինս, ըսաւ Պեռնառ խստութեամբ, գիտէ որ ես լըքած եմ իւր դաւանութիւններն և երբէք չպիտի դամբարանի:

— Ո՛չ, կրկնեց օրիորդ Թալլըվօ, զինքը չափազանց պիտի վշտացնէ այս... և ես շատ կը սիրեմ ձեր կինը, չափազանց. բայց աստի, արդէն իսկ կը նշմարեմ դղեկին ճրագները, և ժամանակը կը պակսի մեզ, քանզի զձեզ համոզելը փոքր գործ մը չէ...: Եւ յետոյ...

— Եւ յետոյ... ի՞նչ:

— Այնքան խորագէտ չէք... չպիտի կրնաք դիւրաւ ըմբռնել:

— Շնորհակալ եմ... և սակայն փորձեցէք...: յանշարտ կը սիրեմ ձեր ձայնը...: Կրնամ չըմբռնել ձեր խօսքերը, սակայն պիտի բաւէ ինձ համար ձեր ներդաշնակ ձայնը:

— Պ. տը Վօտուիգուռ, մի՛ ուղղէք ինձ քաղցր խօսքեր:

խնդրեմ: Լաւ եւս կը սիրեմ ձեր կատակաբանութիւնները զորս սիրելի է ինձ ձեզ դարձնել... քանզի մեր երկուքին մէջ գործածել կարելի և պատշաճ միակ ոճն այդ է: Կըմ բըռնէք ըսածս, այնպէս չէ՞:

Չայս ըսելով, օրիորդ Թալլըվօ գլուխը դարձուցած էր դէպի անոր և բերանը կիսաբաց իւր Սփինքսի ծիծաղով, ցոյց կուտար նմա իւր գեղեցիկ դէմքը զոր կ'ազօտէր երկնից պայծառութիւնը: Պեռնառ կանգ առաւ, փոքր ինչ խոնարհեցաւ դէպի օրիորդ Սապին, և խանդակաթ հայեացք մ'արձակելով անոր վրայ,

— Սապին, գոչեց խուլ ձայնով մը, ի՞նչու պէտք է որ անդունդներ գտնուին մեր երկուքին մէջ:

Կարծես յանդիմանելու և հանդարտեցնելու համար զՊ. աը Վօտուիգուռ, օրիորդ Սապին իւր մերկ ձեռքը Պեռնառի ձեռքին վրայ դրաւ, և

— Տեսնենք, Պարօն, ի՞նչ ըսել կ'ուզէք, ըսաւ մեղմօրէն:

— Պ. աը Վօտուիգուռ բռնեց նորա ձեռքն որ թէև սակաւ ինչ մեծ, և սակայն յոյժ բարեձեւ էր:

— Երանի անոր, մրմնջեց, որ տէր պիտի լինի այս ձեռաց՝ այնչափ գեղեցիկ, այնչափ քնքուշ և այնչափ զօրաւոր: Եւ, յանկարծական շարժմամբ մը, իւր շրթները անոր փակցուց եռանդեամբ:

Օրիորդ Թալլըվօ ուժգին կերպով քաշեց իւր ձեռքն, և յետս նետուելով,

— Ա՛հ, ըսաւ խղճուկ ձայնով, անպաշտպան աղջիկ մը... որ ձեզ կը վստահի ինքզինքը...:

— Ներեցէ՛ք, օրիորդ:

— Արդե՞օք խափուած ե՞մ, պատուաւոր անձ մը չէ՞ք դուք:

— Սպառնով եղէք որ այդպէս է:

— Կը տեսնենք:

Լուսթեամբ շարունակեցին իրենց ճամբան և դղեակ մը տան՝ առանց այլ եւս բառ մ'աւելի փոխանակելու:

Մի քիչ վերջ, տիկին աը Վօտուիգուռ ևս անդ կը մտնէր իւր մասնաւոր սանդուղին դռնէն, զոր դուրս ելած պահուն բաց թողած էր:

Յաջորդ օրը կը վերջանար այն կարճատեւ բնակութիւնը զոր Օրիորդ Սապին հաստատած էր ի Վալմութիէ: Տօքթօր Թալլըվօ երեկոյն իւր եղբորդուստրը տեսնելու եկած լինելով, սովորականէն աւելի տառապեալ վիճակի մէջ գտաւ զտիկին աը Վօտուիգուռ: Նախընթաց օրէն ի վեր մի քանի անգամ մարելիք եկած էր վրան: Չէր կրցած ձաշել: Բժիշկն հարցախորձեց զնա և քննեց վերջին ծայր ուշադրութեամբ: Վերստին հաստատեց տօքթօր Ռէյնօնի նշանակած արտանիշը, թէ հիւանդութիւնը բնաւ ծանր երևոյթ մը չունէր և լոկ ջղային պարզ խանդարումէ մը յառաջ եկած էր: Պատուիրեց շարունակել զօրացուցիչ դեղերու, չափաւոր շարժման, սննդարար ուտեստի կենսական զգուշութիւնները:

Այսու հանդերձ, Սապինի հետ մեկնելէ առաջ, դարաստանին մի ծառուղւոյն մէջ առանձնացաւ Պ. աը Վօտուիգուռի հետ:

— Սիրելի դրացիս, ըսաւ անոր, խնդրեմ մի մեղադրէք զիս. շատ փափուկ խնդրոց վրայ պիտի խօսիմ ձեզ, և կարծեմ պարտաւորութիւն մը պիտի կատարեմ այսու իբրև բժիշկ և իբրև բարեկամ:

— Ո՛հ, Աստուած իմ, գոչեց Պեռնառ: Արդե՞օք կինս...:

— Ո՛չ, բան չկայ... բայց այս հիւժմական վիճակն իմ գուշակութեանցս սահմանէն անդին կ'անցնի...: Տիկին աը Վօտուիգուռ ժամանակ ունեցաւ հանդարտեցնելու այն յուզումները որք զինքը տանջեցին ժանի հիւանդութեան մի-

ջոցին: Ինձ կը թուի ուրեմն որ ուրիշ պատճառ մը լինելու է...: Տիկին աը Վօտուիգուռի կենաց մէջ ես մի միայն երջանկութեան տարերք կը տեսնեմ...: Առանց խօսելու մեծ հարստութեան մը հաճոյց և վայելմանց վրայ, նա ունի ընտիր ամուսին մը, սիրասուն աղջիկ մը, ընտանիք մը և բարեկամներ որք կը պաշտեն զինքը, և այս ամենուն հետ ի միասին դժբաղդ կնոջ մը հիւանդութիւնն ունի, կնոջ մը որ կը տառապի բարոյապէս... որ մեծ վիշտ մը ունի...: Տեսնենք... ի՞նչ բանէ կը կասկածիք... յորմէ կարենայ տանջուիլ:

— Ո՛հ, այո՛, բացագանչեց Պեռնառ, անկեղծ տխրութեան մը շեշտիւ, ինչ որ կը տանջէ զինքը, այն միակ պատճառն է որ մեր ամուսնութենէն ի վեր, մեր երկու կենակցութեանց մէջ վիշտ և վրդովում յառաջ բերած է...: Դուք ինձ չափ գիտէք թէ որչափ ջերմեանդ, աստուածապաշտ է կինս. հասկցած էք նաև թէ ես մասնակից չեմ իւր այս դաւանութեանց...: Արդ, սուսընթաց օրէն ի վեր կնոջս երազն եղած է զիս իւր հաւատքին դարձնել... այդ հաստատա գաղափարը կը չարչարէ զինքը...: Նա կը կարծէր թէ Բարիզու գուարձութիւններն և ապականութիւններն էին որ արդէրք կը լինէին իմ դարձիս ի կրօն...: Այս հոգէն զինքն ազատելու համար հեռացայ Բարիզէն, և Աստուած գիտէ թէ նիւթապէս որչափ միասուեցայ...: Այժմ կը տեսնէ որ նոյն անհասն եմ գիւղին մէջ ինչ որ քաղքին մէջ էի... և, անշուշտ, յուսահատութիւնը կը պաշարէ զինքը... ուրիշ բացատրութիւն չեմ կարող երևակայել այն բարոյական տառապանքին համար որմէ կը կարծէք թէ բըռնուած է...: Բայց վերջապէս, Փիլիպպապէս... որ և է վըտանգ չկայ, այնպէս չէ՞:

— Վտանգ չեմ տեսներ:

— Ո՛հ, տոքթօր, գիտէ՞ք թէ որքան ալ բարի կամք ունենայ մարդ, շատ դժուարին եղած է երջանիկ լինել ընտանեկան յարկի մէջ...: Ի՞նչպէս ընելու է...: Այսօր, ընդհանրապէս, մարդ մը որ կ'ամուսնանայ, շուտի հաւատք... եթէ ըստ արդի ճաշակի, այսինքն ազատ մեծցած աղջիկ մը կնութեան առնու, նոյնն է թէ պջրուհւոյ մը հետ ամուսնացած լինի... եթէ հին աւանդութիւններով մեծցած աղջկան մը հետ ամուսնանայ, մտաւորական որ և է աւելցութիւն չպիտի ունենայ հետը... ամուսնութիւնն ուրիշ բան չէ յայնժամ եթէ ոչ բարոյական ազահարդան մը...: Ուրեմն ամուսնական կապն այլ ևս չպիտի ունենայ զօրութիւն, և լաւագոյնը միթէ հրաժարելը չէ՞ աղկէց:

— Լաւագոյնն է, սիրելի բարեկամս, ըսաւ տօքթօր Թալլըվօ, կանանց տալ այնպիսի կրթութիւն մը որ աւելի յարմար լինի մեր ապրած ժամանակին և աւելի ներդաշնակ մեր ծանօթութեանց վիճակին հետ. այս կերպով իրենց մտաց մէջ քրիստոնէական խեղճ տեղի պիտի ար նոր խոհալի մը...: Ահա ինչ որ պիտի ընէ ապագայն... ահա ինչ որ սկսած են ընել արդէն... և եթէ թոյլ տաք ինձ ըսել, ահա ինչ որ ես իսկ կ'ընեմ իմ տանս մէջ...: Իրաւ է թէ դիպուածը նպատած է ինձ, և ձեռացս մէջ դրած է այն աղջիկը զոր կը ճանչէք...: Իւր հայրը մեռած էր յետին ծայր աղքատութեան մէջ, մայրը՝ քիչ յետոյ՝ անդամալոյժ եղած էր... աղջիկը ինձմէ գատ չունենալով մէկը, իմ բացարձակ խնամոցս յանձնուած էր... գեղեցիկ ձիրքերով օժտեալ աղջիկ մ'էր... կրցայ ուրեմն ուղած կերպով մեծցնել զնա, կրթել իմ սկզբնայն համաձայն և տալիս պատրաստել լինելու մի օր կենացս և խորհրդոցս ընկերուհին...: Պէտք չունիմ աւելցնելու որ զնա ինձ կնութեան առնելէ առաջ սպասեցի որ հասնի ազատօրէն գործել կարենալու տարիքին, և այն պարագային համար յորում իւր զգացումներն համաձայն չլինէին իմ զգացմանցս, ես ապահովուցած էի արդէն իւր ապագայն:

(Շարունակելի)



MAISON PHÉNIX

ՄԵԾ Վ.Ա.ՃԱՌԱՏՈՒՆ



Շապկեղինաց, ձերմակեղինաց եւ Բեդեղինաց

Վաճառատունս կը յայտարարէ իւր բազմաթիւ յաճախորդաց թէ, Նանսիի եւ Բիւմպէրի աշխարհաճանօթ գործատուներէն ի նորոյ ստացած է մեծ քանակութեամբ՝ վերջին նորածեւութեանց համաձայն շինուած՝ արանց, կանանց, և մանկանց համար պատրաստ հագուստեղէններ, օժիտի համար բազմատեսակ ձերմակեղէններ, կնուրքի համար մանկանց զգեստներ և այլ ամէն տեսակ ապրանքներ:

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ.

Զուր.

Շապկի կտաւեայ	Հատը	14 Էն 47 1/2
» գունաւոր սպաճոյ	»	10 Էն 28
» Փանէլա	»	21 Էն 42
» գիշերանոց	»	12 Էն 27
Անդրավարտիկ	»	10 Էն 21
» մատամբօլ	»	15 Էն 22
Օձիք կտաւեայ	տուզինան	17 Էն 54
Թեւնոց	»	29 Էն 65
Թաշկինակ այլ և այլ տեսակ	»	14 Էն 135
Գուլպաներ՝ ֆիլ ա՛նէքօս, բամպակեայ, մետաքսեայ, բրդեայ	»	29 Էն 145
Փողկապ այլ և այլ տեսակ	տուզինան	3 Էն 19

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ.

Զուր.

Շապկի՝ լաւ սպաճոյ, գիմացկուն, պրօտըրիով	Հատը	15 Էն 27
» » » տանթեւայով	»	18 Էն 31
Վարտիկ » » » »	»	14 Էն 22
Վարտիկ » » » պրօտըրիով	»	11 Էն 24
Միսօ » » » »	»	20 Էն 38
» » » տանթեւայով	»	25 Էն 65
Բօրսէ՝ Բարիզի կուրտէ գործատան	»	26 Էն 70
Բօրստի բամպակեայ, մետաքսեայ	»	11 Էն 26
Ցանէլա լաւագոյն տեսակէն	»	15 Էն 40

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ ամէն տեսակ զգեստեղէնք և ձերմակեղէնք:

Զուր.

Սեղանի սիւնոցներ գունաւոր՝ 6 անձեռոցով	20 Էն 39
» » գունաւոր 6 և 12 »	65 Էն 145
Անկողնոյ ծածկոցք մէթրը	9 Էն 17
Գուլպայ՝ ֆիլ ա՛նէքօս, բրդեայ, բամպակեայ	տուզինան 40 Էն 145
Կտաւ Վիշիի, մէթրը	3 Էն 5
Սպիտակ սպաճոյ՝ լաւագոյն տեսակէն	2 Էն 5 1/2

Եւ ուրիշ ամէն տեսակ ապրանքներ 3—52

ԾԱՂԻԿԻ ԱՌԱՋԻՆ տարւոյ շրջանը, գեղեցիկ եւ հաստատուն կերպով կազմուած, կը վաճառի ի գին 50 զրուշ:

ՏՈՒՆՑՈՅՑ. Բանախօսութիւն Տքթ. Ալլո. Լոնկի. գործ Բ. Ռօպէրթ Բօլէճի Հայ ուսանողաց. Գին 60 փարա: Կը գտնուի «Մաղիկ» Նիւազրատան մէջ:

Ս Ի Մ Ո Ն Գ Ա Բ Ա Մ Ա Ճ Ե Ա Ն

Ն Ո Ր

Բ Ա Ռ Ա Գ Ի Բ Ք

ՀԱՅՆԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ

Հրատարակուած է 30րդ Թերթը: Բաժանորդագինն է կանխիկ 15 դա. հեկան: Գրմել առ հեղինակն ի Պէրպլերեան տպարան:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ
132րդ Վ.Ի.Ճ.Ա.Կ.Ա.Հ.Ա.Ն.Ո.Ի.Թ.Ի.Ն.Ը
տեղի պիտի ունենայ յառաջիկայ Յունուար 20ին: Մեծ պարգեւն է,
300,000 Ֆրանք

Գին բաղդատումի 7 1/2 զրուշ:

Գաւառներէն ստանալ փափագողը կարող են գրմել «Մաղիկ» Յանձնակատարութեան Գրասենեակին, տոմսակի գնոյն հետ զրկելով 40 փարա աւելի՝ փօստի ծախուց համար: Գրասենեակը պատասխանատու թիւն չստանձներ, եթէ պատահի որ զրկուած նամակը ճանբան մուրրի և տիրօջը ձեռքը չը հասնի: Տոմսակն ապահովագրեալ նամակով ստանալու համար, սկստք է 40 փարայի տեղ 90 փարա աւելի զրկել:



ԿԱՐԱՊԵՑ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

Վաճառատուն Ֆէսի եւ Թօնաֆիլի

Կ. Պոլիս, Պանչե-Գաթա, Հաֆտե ճարտեսի, շատրվածաւ Հանի Պէրբե ոչայի Խանաթի Գիմայի կողմ, Թիւ 54

Ընտիր Փէսեր ամէն տեսակէն, Պէզիկի և այլ խաղի թղթեր և մարքէթ: Ճաշակաւոր քաւաթներ, թաշկինակ, գուլպայ: Հոտաւէտ նիւթեր, բորթմօնէ, հովանոց, գաւազան, լատտիկ—կալօշ, եւ այլն:

Ճաշակաւոր ընտիր ապրանքներ չափաւոր գիներով: 7—12

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ ՈՒ Ն

ԱՄԻՆ ՏԵՆԱԿ ԳԱՅՆԱԿԱՑ
ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

Վկայեալ դաշնակոյարդար էՌԱՌԻ
հռչակաւոր գործատան
Գնուլն եւ վաճառուլն

Փոխանակուրիւն հին դաշնակաց հետ

Կը վաճառուին ամէն տեսակ դաշնակներ տնտեսական վճարմամբ և մասնաւորաբար Գաղղիոյ լաւագոյն գործարաններէն Բլէնի դաշնակները, խիստ դիւրամատչելի գիններով:

Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն գործարանաց դաշնակներէն կը բերուին:

Վարձու նոր դաշնակներ չափաւոր գիններով:

Բաժանորդագրութիւն դաշնակաց յարգարման (accord):

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ա Ն Ո Ց

Դաշնակաց նորագութեան, գաղղիական ընտիր նիւթեղէններով:

ՀՐԱՂԱՆԳ դաշնակները չհինցնելու և լաւագոյն վիճակի մէջ պահելու:

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք ամենայն խնամով և փութով կը կատարուին:

Աւելի մանրամասնութեանց համար դիմել Բերա, Մեծ-Փողոց, Ղալաթա Սարայի դիմաց, Խրիսթաքի խան, թիւ 10:

Անմրցելի աժանութիւն
(11—30)

ՆՈՐ—ԴԱՐ

Ամենօրեայ Լրագիր
ԱԶԳԱՅԻՆ, ԲՍՂԱՌԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Ի Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տէր Ե-Խճաքէր՝ Սպանդար Սպանդարեան
Յառաջիկայ 1892ի սկիզբէն կը մանէ
Իւր Իններորդ տարին

Թուրքիոյ, Եւրոպիոյ և Ամերիկայի
համար բաժանորդագրինն է (ճանապարհի
հի ծախսով) 40 Փրանք:

Խմբագրութեան հասցէն՝ Rédaction
du journal «Nor-Dar»
TIFLIS (Caucase)

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՑԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆԵԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
Էսկի-Չապիլէ փողոց, քիւ 61

ՖԱՆԷԼԱ ԱԳՐԱՆԱՑ ՀԻՒՍՍՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԵՍԼՆԵՆ ԵՂԲԱՐՑ

Ի Մանուկ փաշա, Գիւրքի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնաճիւղն է
Ի Պահչէ—Գարու, Մաքսատան կարգ, Թիւ 44 Թօհաֆիլի վաճառատունը:



Թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր քա-
նակութեամբ՝ արանց, կանանց
և տղայոց համար՝ անխառն
րրդէ, մանածէ, ևայլն, ուզ-
ուած թանձրութեամբ և ուզ-
ուած չափով յանձնարարու-
թիւնք կ'ընդունուին ու պատ-
րաստ կը ծախուին Փանէլա
չապիկներ, վարտիքներ, մի-
սոցուններ, ևայլն: Ապ-
րանքները կը մրցին եւրոպա-
կաններուն հետ թէ՛ աժանու-
թեամբ, թէ՛ դիմացիլունու-
թեամբ և թէ՛ իրենց նուրբ
ճաշակով: Յաճախորդք ամէն
կերպիւ գո՛հ պիտի մնան:

PAPETERIES DE VIDALON

Թ Ղ Թ Ե Ղ Ի Ն Ա Ց

ՄԵԾ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՎԻՏԱԼՈՆԻ

Հիմնեալ 1597 ին Ի Փարիզ, Բալէսթրօ փողոց, Թիւ 39

Դրամագլուխ 3,150,000 Փրանք:

Կ'արտադրէ տարին 3,000,000 քիլօկրամէն աւելի

Ներկայացուցիչ Հէնրի Ժարտօն, Պարնաթան Խան



Դրագնեկի և տպագրական՝ զանազան տեսակ ընտիր թուղթեր, գծագրու-
թեան թուղթ սպիտակ և զանազան գոյներով, ծծուն թուղթեր, զանազան
տեսակ ստուարաթղթեր (մուխավա), լուսանկարչական թուղթեր, մագաղա-
թանման թուղթեր, նամակաց պահարաններ, ևայլն, ևայլն:

«ԾԱՂԻԿ» կը տպագրուի Վիտալոնի գործատան մէջ պատրաստուած թուղթի
վրայ: — Մանրամասն տեղեկութեանց և յանձնարարութեանց համար դիմել
«ԾԱՂԻԿ» խմբագրատունը:

7—10

ԴԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ՌՈՒՍԵՐԷՆ

Լեզուաց քաջահմուտ ուսուցիչ
մը պատրաստ է դասեր ստանձնել
ուսուցանելու համար սոյն լեզուներ-
ըն դիւրուսոյց եղանակաւ և դիւ-
րամատչելի պայմաններով: Դիմել
«ԾԱՂԻԿ» խմբագրութեան:

ԻՏԱԼԵՐԷՆ ԵՒ ԳԱՂՂԻՆԵՐԷՆ

Եւրոպա ուսած երիտասարդ մը
պատրաստ է ստանձնել մասնաւոր դա-
սեր Իտալերէնի և Գաղղիերէնի, վեր-
ջին նորուսոյց եղանակներով: Դիմել
«Ծաղիկ» խմբագրատունը: